Գավառ համայնքի երիտասարդների քաղաքացիական մասնակցության հետազոտության արդյունքների վերլուծություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ 3

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ՝ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ 23

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 47

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 62

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀԿ - Հասարակական կազմակերպություն

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին

ՏՏ - Տնային տնտեսություն

ՔՀԿ - Քաղաքացիական հասարակության կառույց

ՖԽՔ - Ֆոկուս խմբային քննարկում

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության նպատակն է իրականացնել Գեղարքունիքի մարզի Գավառ խոշորացված համայնքի հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում 18-30 տարեկան երիտասարդների ներգրավվածության ուսումնասիրություն, որը հիմք կհանդիսանա Գավառի երիտասարդական քաղաքականության տվյալահեն մշակման համար: Հետազոտության շրջանակում իրականացվել են քանակական հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ և խորին հարցազրույցներ Գավառ համայնքում բնակվող 18-30 տարեկան երիտասարդների հետ, խորին հարցազրույցներ Գավառի ՏԻՄ, գործող ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև Գավառ համայնքի երիտասարդական քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերի վերլուծություն:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել Գավառ համայնքի երիտասարդների իրազեկվածության մակարդակը՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և համայնքային կյանքի վերաբերյալ:
- Պարզել Գավառ համայնքի երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը և հանրային քաղաքականության մշակմանը:
- Բացահայտել երիտասարդների ներգրավվածությունը համայնքում իրականացվող միջոցառումներին, ծրագրերին և նախաձեռնություններին:
- Պարզել երիտասարդների կարիքները՝ ՏԻՄ-երում և հանրային քաղաքականության գործընթացներում մասնակցության համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների մասով:
- Ուսումնասիրել Գավառի ՏԻՄ ներկայացուցիչների, Գավառում գործող ՔՀԿ-ների և միջզագային կազմակերպությունների ներկայացուցիչների

գնահատականները և առաջարկները՝ համայնքում երիտասարդների քաղաքացիական մասնակցության վերաբերյալ:
- Իրականացնել ՏԻՄ գործունեության մոնիթորինգ, ներառյալ՝ համայնքային բյուջե, հնգամյա զարգացման ծրագիր և ՏԻՄ աշխատանքային պլանները:
- Մշակել առաջարկներ՝ Գավառ համայնքում երիտասարդների քաղաքացիական մասնակցության բարելավման ուղղությամբ:

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ

Ըստ համայնքապետարանի տվյալների՝ Գավառ համայնքում բնակվող 18-30 տարեկան երիտասարդների ընդհանուր թիվը 8817 է, որից՝ 4215 իգական, իսկ 4602-ը՝ արական: Գավառ համայնքի թվով 18-30 տարեկան 369 երիտասարդների համայնքային ներկայացուցչական ընտրանքը ձևավորվել է տնային տնտեսություններ այցելությունների միջոցով՝ պատահական բազմաստիճան շերտավորված կլաստերային ընտրանքի հիման վրա (95% վստահության ինտերվալ և 5% սխալի միջակայք): Ընտրանքի առաջին քայլում բնակավայրերը բաժանվել են քաղաքայինի և գյուղականի:

Դաշտային աշխատանքերն իրականացվել են 2024 թվականի օգոստոսի 18-ից մինչև 27-ը: Ընտրանքի չափի բաշխումն ըստ բնակավայրերի ներկայացված է ստորև աղյուսակում: Այնուհետև բնակավայրերը բաժանվել են 24 կլաստերների՝ ըստ ընտրատեղամասերի, և յուրաքանչյուր կլաստերում իրականացվել է 15-ական հարցում: Յուրաքանչյուր կլաստերում հարցազրույցի ենթակա ՏՏ-ներն ընտրվել են պատահական քայլի մեթոդով: Յուրաքանչյուր հարցազրուցավարի տրվել է ընտրված ընտրատեղամասը՝ որպես ելակետ, որից հետո ՏՏ-ներն ընտրվել են պատահական քայլի միջոցով: Հարցվողները ՏՏ-ներում ընտրվել են մոտակա ծննդյան օրվա մեթոդով: Հարցազրույցներն իրականացվել են տվյալ համայնքում բնակվող, համայնքապետարանի, մարզպետարանի, ՔՀԿ-ի աշխատակից չհանդիսացող, 18-30 տարեկան երիտասարդների հետ: Յուրաքանչյուր ՏՏ-ում իրականացվել է մեկ հարցազրույց:

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքը

Համայնք	18-30 տարեկան բնակչություն	Տոկոսը ընդհանուրի մեջ	Ընտրանքի ծավալ
Գավառ	3.933	44.6%	165
Բերդկունք	39	0.4%	4
Գանձակ	624	7.1%	25
Գեղարքունիք	273	3.1%	11
Լանջաղբյուր	342	3.9%	14

Լճափ	193	2.2%	8
Ծաղկաշեն	96	1.1%	4
Ծովազարդ	317	3.6%	14
Կարմիրգյուղ	842	9.5%	35
Հայրավանք	117	1.3%	5
Նորատուս	1038	11.8%	43
Սարուխան	1003	11.4%	41
Ընդհանուր	**8.817**	**100%**	**369**

Քանակական հարցմանը մասնակցած երիտասարդների 25%-ի սեռը արական է, իսկ 75%-ինը՝ իգական: Տարիքային բաշխումը հետևյալն է՝ 18-22 տարեկաններ՝ 47%, 23-26 տարեկաններ՝ 24%, 27-30 տարեկաններ՝ 29%: Հարցվողների մյուս սոցիալ-դեմոգրաֆիական բնութագրիչները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Ուսումնասիրված երիտասարդների հիմնական սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները

Չափանիշ	Թիվ	Տոկոս
Ընդհանուր	**369**	**100**
Սեռ		
Իգական	277	75%
Արական	92	25%
Տարիք		
18-22	173	47%
23-26	89	24%
27-30	107	29%
Կրթություն		
Միջնակարգ	225	61%
Միջին մասնագիտական	43	12%
Բարձրագույն	96	26%
Հետբուհական	5	1%
Ամուսնական կարգիավիճակ		
Երբևէ չամուսնացած	167	45%
Ամուսնացած	200	54%
Ամուսնալուծված/բաժանված	2	1%
Զբաղվածություն		
Աշխատում եմ մասնավոր ընկերությունում	42	11%
Աշխատում եմ պետական կառույցում	43	12%
Ուսանող/աշակերտ եմ	89	24%
Գործազուրկ եմ	28	8%
Տնային տնտեսուհի	116	31%
Ինքնազբաղված	47	13%
Ձեռնարկատեր	4	1%

Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացրել են վերապատրաստված 6 հարցազրուցավար և 2 համակարգող։

Հարցազրույցներն անցկացվել են դեմ առ դեմ՝ պլանշետներում և հեռախոսներում ներբեռնված համակարգչային օժանդակ անհատական հարցազրույցի (CAPI) համակարգի միջոցով: Քանակական հարցման կիսաձևայնացված հարցաթերթը բաղկացած է 4 բաժիններից՝ ՏԻՄ-երի վերաբերյալ երիտասարդների իրազեկվածություն, հանրային կյանքին և տեղական ինքնակառավարմանը երիտասարդների մասնակցություն, երիտասարդների կարիքներ և առաջնահերթություններ և սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ: Հետազոտության համար մշակված նախնական հարցաթերթը ենթարկվել է պիլոտավորման: Ընդհանուր առմամբ, իրականացվել է հետազոտության ընտրանքի 3%-ի չափով պիլոտավորում, որը կազմում է 12 հարցաթերթ: Ըստ պիլոտավորման արդյունքների՝ հարցաթերթը վերջնականացվել է։

Հավաքագրված տվյալների որակի վերահսկողության նպատակով իրականացվել են պատահականության սկզբունքով հարցաթերթերի առնվազն 10%-ի ստուգում՝ զուգահեռ այցելությունների և հետզանգերի միջոցով, ինչպես նաև տվյալների բազայի ամենօրյա մոնիտորինգ։

Տվյալների վերլուծությունը կառուցվել է հիմնական հետազոտական խնդիրների շուրջ: Օգտագործվել են նկարագրողական (հաճախականության բաշխումներ, խաչաձև աղյուսակներ, կենտրոնական միտումների չափումներ և այլն) և տրամաբանական վիճակագրական մեթոդներ (միջինների համեմատություններ, կոռելիացիաներ)՝ հատկապես ժողովրդագրական գործոնների համար (սեռ, տարիք, կրթություն, բնակավայր, զբաղվածություն): Բոլոր փոփոխականները փորձարկվել են ըստ նորմալ բաշխման, և համապատասխան վիճակագրական թեստերն ընտրվել են ըստ փորձարկման արդյունքների: Եթե հարցը նախատեսված է եղել բոլորի համար և վերլուծությունում նշված ընտրանքի թիվը փոքր է ընտրանքի չափից (369), նշանակում է՝ «Դժվարանում եմ պատասխանել» կամ «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակները հանվել են, և տոկոսային տվյալները հաշվարկվել են առանց դրանց:

Որակական հարցազրույցներն իրականացվել են սեպտեմբերի 11-ից մինչև 27-ը։ Կիրառվել է նպատակաուղղված ընտրանք ըստ տարբեր չափանիշների՝ հետազոտության շրջանակներում ներգրավելով համայնքում առավել ակտիվ երիտասարդական ծրագրեր իրականացնող ՔՀԿ-ներին և միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև երիտասարդների հարցերով առավել տեղեկացված ՏԻՄ աշխատակիցներին։ Ընդհանուր առմամբ, իրականացվել է 10 ֆոկուս խմբային քննարկում (6-ը՝ գյուղական համայնքներում, 4-ը՝ Գավառում) և 9

խորին հարցազրույց առանցքային տեղեկատուների հետ: Ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցել է 95 երիտասարդ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընդանուր առմամբ, թե՛ քանակական, և թե՛ որակական հարցումները ցույց են տալիս երիտասարդների ցածր իրազեկվածության մակարդակ՝ ինչպես երիտասարդական ծրագրերի ու միջոցառումների, այնպես էլ որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացների վերաբերյալ:

Քանակական հարցմանը մասնակցած երիտասարդների մեծամասնության մոտ առկա է համայնքի կյանքի հանդեպ ցածր հետաքրքրվածության մակարդակ: Հարցվողների 71%-ը, հետաքրքրված է իր համայնքի կյանքով միայն որոշ չափով, և միայն 18%-ն է շատ հետաքրքված: Առանձնապես հետաքրքրված չէ երիտասարդների 9%-ը, և ընդհանրապես հետաքրքրված չէ 2%-ը:

Գծապատկեր 1. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք հետաքրքրված Ձեր համայնքի կյանքով (n=369)



Համայնքի սոցիալական և քաղաքական կյանքով ոչ այդքան ակտիվ հետաքրքվածությունը դրսևորվում է նաև սոցիալական և քաղաքական նորություններին հետևելու հաճախականությանը վերաբերող հարցերում: Երիտասարդների միայն 16%-ն է ամեն օր հետևում իր համայնքին վերաբերող սոցիալական և քաղաքական նորություններին: 33%-ը դա անում է շաբաթը մի քանի անգամ, 27%-ը՝ ամիսը մի քանի անգամ, և 7%-ը՝ երբեք:

Գծապատկեր 2. Որքա՞ն հաճախ եք հետևում Ձեր համայնքին վերաբերող սոցիալական/քաղաքական նորություններին (n=369)



Քանակական հարցմանը շրջանակում երիտասարդները նշել են նաև այն հիմնական աղբյուրները, որոնց միջոցով նրանք ստանում են իրենց համայնքին վերաբերող սոցիալական և քաղաքական նորություններ: Ամենահաճախ նշվող աղբյուրը ընկերներն են (53%), ընտանիքն ու բարեկամները (47%), սոցիալական ցանցերը (47%) և համացանցը (41%): Հեռուստատեսությունը որպես նորությունների ստացման աղբյուր նշել է հարցվողների միայն 12%-ը: Ամենաքիչը նշված աղբյուրներն են ՔՀԿ-ները (1%), գործընկերները (3%) և (5%) հարևանները:

Աղյուսակ 3. Որո՞նք են հիմնական երեք աղբյուները, որոնցով ստանում եք Ձեր համայնքին վերաբերող սոցիալական/քաղաքական նորություններ

Աղբյուրներ	N	Տոկոս	Տոկոսը հարցվողների ընդհանուր թվի մեջ
Ընկերներ	197	23%	53%
Ընտանիք, բարեկամներ	174	20%	47%
Հարևաններ	40	5%	11%
Գործընկերներ	24	3%	7%
Քաղաքացիական հասարակության կառույցներ	9	1%	2%
Հեռուստատեսություն	43	5%	12%
Համացանց	150	18%	41%
Սոցիալական ցանցեր	174	20%	47%
Դպրոց, համալսարան	38	4%	10%
Ոչ մի աղբյուրից չեմ ստանում	6	1%	2%
Ընդհանուր	**855**	**100%**	**232%**

Երիտասարդները քիչ են ներգրավված նաև իրենց համայնքին վերաբերող սոցիալական և քաղաքական հարցերի քննարկումներում: Նրանք առավել հաճախ դա

անում են ընտանիքում (31%-ը՝ շաբաթը մի քանի անգամ, և 31%-ը՝ ամիսը մի քանի անգամ) և ընկերների հետ (22%-ը՝ շաբաթը մի քանի անգամ, և 28%-ը՝ ամիսը մի քանի անգամ)։ Երիտասարդները սոցիալական և քաղաքական հարցեր առավել հազվադեպ քննարկում են գործընկերների (69%-ը՝ երբեք), հարևանների (62%-ը՝ երբեք) և անծանոթների հետ (87%-ը՝ երբեք)։

Աղյուսակ 4. Որքա՞ն հաճախ եք քննարկում Ձեր համայնքին վերաբերող սոցիալական/քաղաքական հարցեր

	Թիվ	Տոկոս
Ընդհանուր	**369**	**100**
Ընտանիքում		
Ամեն օր	31	8%
Շաբաթը մի քանի անգամ	114	31%
Ամիսը մի քանի անգամ	118	32%
Տարվա մեջ մի քանի անգամ	64	17%
Երբեք	42	12%
Ընկերների հետ		
Ամեն օր	38	10%
Շաբաթը մի քանի անգամ	81	22%
Ամիսը մի քանի անգամ	103	28%
Տարվա մեջ մի քանի անգամ	43	12%
Երբեք	104	28%
Գործընկերների հետ		
Ամեն օր	17	5%
Շաբաթը մի քանի անգամ	28	8%
Ամիսը մի քանի անգամ	42	11%
Տարվա մեջ մի քանի անգամ	25	7%
Երբեք	255	69%
Հարևանների հետ		
Ամեն օր	14	4%
Շաբաթը մի քանի անգամ	31	8%
Ամիսը մի քանի անգամ	54	15%
Տարվա մեջ մի քանի անգամ	41	11%
Երբեք	227	62%
Անծանոթների հետ		
Ամեն օր	2	1%
Շաբաթը մի քանի անգամ	9	2%
Ամիսը մի քանի անգամ	19	5%
Տարվա մեջ մի քանի անգամ	18	5%
Երբեք	319	87%

Չնայած սոցիալական ցանցերը երիտասարդների համար նորություններ ստանալու հիմնական աղբյուրներից են, նրանք խիստ պասիվ են այդ հարթակներում սոցիալական և քաղաքական թեմաներով գրառումներ կամ մեկնաբանություններ

կատարելու հարցում: Հարցվողների 82%-ը դա չի անում երբեք, և միայն 1%-ն է անում ամեն օր:

Գծապատկեր 3. Որքա՞ն հաճախ եք կատարում գրառումներ կամ մեկնաբանություններ Ձեր համայնքին վերաբերող սոցիալական/քաղաքական հարցերի շուրջ սոցիալական ցանցերում (n=369)



Քանակական հարցման շրջանակում ուսումնասիրվել է նաև երիտասարդների իրազեկվածության մակարդակը տեղական կառույցների և կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Հարցվողների մեծամասնությունն իրեն իրազեկված է համարում համայնքապետարանի (68%) և մարզպետարանի (56%) գործունեության վերաբերյալ: Համայնքում գործող ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների գործունեությունից երիտասարդները մեծ մասամբ տեղյակ չեն: 53%-ը նշել է, որ բոլորովին իրազեկված չէ ՔՀԿ-ների գործունեությունից, և 60%-ը բոլորովին իրազեկված չէ միջազգային կազմակերպությունների գործունեությունից:

Գծապատկեր 4. Խնդրում ենք գնահատել Ձեր իրազեկվածության մակարդակը հետևյալ կառույցների գործունեության վերաբերյալ (n=367)



Համայնքում գործող ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների գործունեության վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը դրսևորվում է նաև հետագա հարցերում, որտեղ երիտասարդների կեսից ավելին (65%) դժվարացել է նշել երիտասարդական ծրագրեր իրականացնող որևէ ՔՀԿ-ի, իսկ ճնշող մեծամասնությունը՝ միջազգային կազմակերպության (96%) անուն:

Գծապատկեր 5. Գավառ համայնքում երիտասարդական ծրագրեր իրականացնող որևէ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ գիտե՞ք (n=369)



Գծապատկեր 6. Գավառ համայնքում երիտասարդական ծրագրեր իրականացնող որևէ միջազգային կազմակերպություն գիտե՞ք (n=369)



Երիտասարդների կողմից ամենահաճախը նշված ՔՀԿ-ներն են «Ռեստարտ Գավառ»-ը (22%), «Գավառի երիտասարդների տուն»-ը (13%), «Բայազետ կենտրոն»-ը (4%) և «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը (3%): Ամենահաճախ հիշատակված միջազգային կազմակերպությունը «Կարիտաս»-ն է (2%):

Աղյուսակ 5. Գավառ համայնքում երիտասարդական ծրագրեր իրականացնող որևէ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ գիտե՞ք[1]

ՔՀԿ	N	Տոկոս	Տոկոսն հարցվողների ընդհանուր թվի մեջ
Ռեստարտ Գավառ	82	49%	22%
Գավառի երիտասարդների տուն	47	28%	13%
Բայազետ կենտրոն	16	9%	4%
«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ	12	7%	3%
Այլ ՔՀԿ-ներ	12	7%	7%
Ընդհանուր	**169**	**100%**	**49%**

Հարցվողների ճնշող մեծամասնությունը բոլորովին իրազեկված չէ Գավառի համայնքապետարանի կողմից մշակվող երիտասարդական քաղաքականություն վերաբերյալ: Որպես տեղեկացված չլինելու հիմնական պատճառ՝ նշվում է ժամանակի բացակայությունը (42%):

Գծապատկեր 7. Տեղյա՞կ եք արդյոք Գավառի համայնքապետարանի կողմից մշակվող երիտասարդական քաղաքականություն մասին (n=369)

[1] Հարցվողները հնարավորություն են ունեցել նշելու մեկից ավելի տարբերակ



Գծապատկեր 8. Եթե ոչ, ապա ո՞րն է պատճառը (n=299)



Երիտասարդների մեծամասնությունը (75%) տեղեկացված չէ նաև համայնքում իրականացվող երիտասարդական ծրագրերից և միջոցառումներից: Ամենահաճախը նշված միջոցառումներն են Երիտասարդները օրը (40%) և Ֆեստիվառը (39%): Երիտասարդական ծրագրերի ու միջոցառումների մասին տեղեկություններ ստանալու հիմնական աղբյուրներն են ընկերները (19%), սոցիալական ցանցերը (19%), ընտանիքը և բարեկամները (11%) և համացանցը (9%):

Գծապատկեր 9. Տեղյա՞կ եք արդյոք Գավառ համայնքում/Ձեր համայնքում իրականացվող երիտասարդական ծրագրերից և միջոցառումներից (n=369)



Աղյուսակ 6. Որո՞նք են այն երեք հիմնական աղբյուրները, որոնցից տեղեկատվություն եք ստանում Գավառում իրականացվող երիտասարդական ծրագրերի ու միջոցառումների մասին

Աղբյուրներ	N	Տոկոս	Տոկոսն հարցվողների ընդհանուր թվի մեջ
Ընկերներ	71	28%	19%
Ընտանիք, բարեկամներ	40	16%	11%
Հարևաններ	6	2%	2%
Գործընկերներ	11	4%	3%
Քաղաքացիական հասարակության կառույցներ	8	3%	2%
Հեռուստատեսություն	11	4%	3%
Համացանց	34	13%	9%
Սոցիալական ցանցեր	70	27%	19%
Դպրոց, համալսարան	7	3%	2%
Ընդհանուր	**258**	**100%**	**70%**

Հարցմանը մասնակցած երիտասարդների կեսից ավելին (63%) ճիշտ է նշել Գավառ խոշորացված համայնքի ղեկավարի անունը, սակայն, բավականին նշանակալի տոկոսը (37%) դժվարացել է այն ասել: Ինչ վերաբերում է բնակավայրերի վարչական ղեկավարներին, հետաքրքրական է, որ այս հարցում երիտասարդներն ավելի քիչ են իրազեկված. 75%-ը չի կարողացել ասել, թե ով է իր բնակավայրի վարչական ղեկավարը:

Գծապատկեր 10. Գիտե՞ք արդյոք, թե ով է Գավառ խոշորացված համայնքի ղեկավարը (n=369)



Գծապատկեր 11. Գիտե՞ք արդյոք, թե ով է Ձեր բնակավայրի վարչական ղեկավարը (n=369)



Երիտասարդների շրջանում նաև առկա է իրազեկվածության ցածր մակարդակ համայնքում որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացների վերաբերյալ: Հարցվողների միայն 30%-ն է տեղյակ, թե որ կառույցն է պատասխանատու Գավառ խոշորացված համայնքի բյուջեի հաստատման համար: Որպես կառույցի անուն՝ ամենահաճախը նշվել են համայնքապետարանը (62%) և մարզպետարանը (28%):

Գծապատկեր 12. Գիտե՞ք արդյոք, թե որ կառույցն է պատասխանատու Գավառ խոշորացված համայնքի բյուջեի հաստատման համար (n=368)



Գծապատկեր 13. Նշել կառույցի անունը (n=111)



Ինչ վերաբերում է երիտասարդական քաղաքականությանը, երիտասարդների միայն 17%-ն է տեղյակ, թե որ կառույցն է դրանով զբաղվում: Որպես կառույցի անուն՝ մեծամասնությունը (83%) նշել է մարզպետարանը:

Գծապատկեր 14. Գիտե՞ք արդյոք, թե որ կառույցն է պատասխանատու Գավառ խոշորացված համայնքում երիտասարդական քաղաքականության մշակման համար (n=368)



Գծապատկեր 15. Նշել կառույցի անունը (n=64)



Հարցմանը մասնակցած երիտասարդների ճնշող մեծամասնությունը՝ 82%-ը, դժվարացել է ասել, թե քանի անդամ ունի Գավառ խոշորացված համայնքի ավագանին: Հարցին պատասխանած 67 երիտասարդներից միայն երկուսն են նշել ճիշտ թիվը՝ 26 անդամ: Միևնույն ժամանակ, հարցվողների 63%-ը նշել է, որ անձամբ չի ճանաչում ավագանու ոչ մի անդամի, և միայն 6%-ն է, որ անձամբ ճանաչում է 5-ից ավելի անդամի:

Քանակական հարցումների տվյալների վերլուծությունը բացահայտեց երիտասարդների իրազեկվածությանը վերաբերող մի շարք առանձնահատկություններ՝ կախված սոցիալ-ժողովրդագրական բնութագիչներից:

Ընդհանուր առմամբ, միջին մասնագիտական (28%) և բարձրագույն կրթություն ունեցողներն (25%) ավելի հետաքրքրված են իրենց համայնքի կյանքով, քան

միջնակարգ կրթություն ունեցողները (13%): Միևնույն ժամանակ, 27-30 տարեկանները (92%) մի փոքր ավելի շատ են հետաքրքրված, քան 18-22 (89%) և 23-26 տարեկանները (84%):

Աղյուսակ 7. Հետաքրքրվածությունը համայնքի կյանքով՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Շատ և որոշ չափով հետաքրքրվածների %	Նշանակալիության թեստ
Հետաքրքրվածությունը համայնքի կյանքով	**328**	**88%**	**n/a**
Կրթության մակարդակ			
Միջնակարգ	190	84%	Kruskal-Wallis's test, p = 0.000
Միջին մասնագիտական	39	90%	
Բարձրագույն[2]	99	98%	
Տարիք			
18-22	154	89%	Kruskal-Wallis's test, p = 0.031
23-26	75	84%	
27-30	99	92%	

Արական սեռի երիտասարդներն ավելի իրազեկված են իրենց համայնքի և բնակավայրի վարչական ղեկավարի հարցում: Արական սեռի հարցվողների 75%-ը գիտի, թե ով է Գավառ խոշորացված համայնքի ղեկավարը, իսկ իգական սեռի հարցվողների՝ 58%-ը: Բնակավայրի վարչական ղեկավարի դեպքում արական սեռի հարցվողների 89%-ն է իրազեկված, և իգական դեռի հարցվողների՝ 70%-ը: Տարբերություններ են արձանագրվել նաև ըստ կրթական մակարդակի: Բարձրագույն կրթություն ունեցողների 78%-ն է տեղյակ, թե ով է Գավառ խոշորացված համայնքի ղեկավարը, մինչդեռ միջնակարգ կրթություն ունեցողների 55%-ն է այս հարցում իրազեկված: Տարիքային խմբերի առումով պատկերը հետևյալն է. 27-30 տարիքային խմբին պատկանող երիտասարդների ավելի բարձր տոկոս (73%) գիտի, թե ով է Գավառ խոշորացված համայնքի ղեկավարը, մինչդեռ 18-22 և 23-26 տարիքային խմբերի մոտ այդ տոկոսն ավելի ցածր է՝ 57% և 61% համապատասխանաբար:

Աղյուսակ 8. Համայնքի ղեկավարի վերաբերյալ իրազեկվածությունը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	%	Նշանակալիության թեստ
Տեղյակ է, թե ով է Գավառ խոշորացված համայնքի ղեկավարը	**231**	**63%**	**n/a**
Սեռ			
Արական	69	75%	Chi-square test chi-square=8.047, p=0.005
Իգական	162	58%	
Կրթություն			
Միջնակարգ	123	55%	

[2] Այս և հետագա հաշվարկներում «Բարձրագույն» և «Հետբուհական» տարբերակները միավորվել են

Միջին մասնագիտական	29	67%	Chi-square test, chi-square=17.009, p=0.001
Բարձրագույն	79	78%	
Տարիք			
18-22	99	57%	Chi-square test, chi-square=7.121, p=0.028
23-26	54	61%	
27-30	78	73%	

Հետաքրքրական է, որ միջին մասնագիտական կրթություն ունեցողներն ամենաշատն են իրազեկված իրենց համայնքում իրականացվող երիտասարդական ծրագրերից ու միջոցառումներից (44%), քան միջնակարգ (22%) և բարձրագույն կրթություն ունեցողները (24%): Միևնույն ժամանակ, երիտասարդական ծրագրերից ու միջոցառումներից առավել տեղեկացված են ուսանողները (36%) և պետական կառույցների աշխատակիցները (35%), իսկ առավել քիչ տեղեկացված են տնային տնտեսուհիներն (17%) ու ինքնազբաղվածները (17%): Այս հարցում տարբերվում են նաև գյուղաբնակներն ու քաղաքաբնակները՝ 20% և 32% համապատասխանաբար:

Աղյուսակ 9. Երիտասարդական ծրագրերի վերաբերյալ իրազեկվածությունը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	%	Նշանակալիության թեստ
Տեղյակ է համայնքի երիտասարդական ծրագրերից	**92**	**25%**	**n/a**
Բնակավայր			
Քաղաքային	52	32%	Chi-square test, chi-square=6.910, p=0.009
Գյուղական	40	20%	
Կրթություն			
Միջնակարգ	49	22%	Chi-square test, chi-square=9.827, p=0.020
Միջին մասնագիտական	19	44%	
Բարձրագույն	24	24%	
Զբաղվածություն			
Աշխատում եմ մասնավոր ընկերությունում	11	26%	Chi-square test, chi-square=14.075, p=0.029
Աշխատում եմ պետական կառույցում	15	35%	
Ուսանող/աշակերտ եմ	32	36%	
Գործազուրկ եմ	5	18%	
Տնային տնտեսուհի	20	17%	
Ինքնազբաղված	8	17%	
Զեռնարկատեր	1	25%	

Համայնքում գործող ՔՀԿ-ների առումով ավելի տեղեկացված են բարձրագույն կրթություն ունեցողները (48%)՝համեմատած միջին մասնագիտական (39%) և միջնակարգ կրթություն ունեցողների հետ (28%): Այս հարցում տարբերություններ առկա են նաև քաղաքաբնակ և գյուղաբնակ երիտասարդների շրջանում:

Քաղաքաբնակների ավելի մեծ տոկոս է (41.2%) նշել իր համայնքում երիտասարդական ծրագրեր իրականացնող ՔՀԿ-ի անուն, քանի գյուղաբնակների (30%): Ինչ վերաբերում է տարիքային խմբերին, այստեղ ևս գրանցվել են տարբերություններ: 18-22 տարեկան երիտասարդների ավելի մեծ տոկոս (45%) գիտի իր համայնքում գործող ՔՀԿ՝ համեմատած 23-26 (36%) և 27-30 (18%) տարիքային խմբերի: Նմանապես, ավելի ցածր տարիքի երիտասարդներն ավելի շատ են իրազեկված իրենց համայնքում իրականացվող երիտասարդական ծրագրերից և միջոցառումներից. 18-22 տարեկաններ՝ 32% լիովին իրազեկված, 23-26 տարեկաններ՝ 18% լիովին իրազեկված, 27-30 տարեկաններ՝ 19% լիովին իրազեկված (chi-square=9.640, p=0.008):

Աղյուսակ 10. ՔՀԿ-ների վերաբերյալ իրազեկվածությունը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	%	Նշանակալիության թեստ
Գիտի իր համայնքում գործող ՔՀԿ	**129**	**35%**	**n/a**
Բնակավայր			
Քաղաքային	68	41%	Chi-square test chi-square=5.132, p=0.023
Գյուղական	61	30%	
Կրթություն			
Միջնակարգ	64	29%	Chi-square test, chi-square=11.740, p=0.008
Միջին մասնագիտական	17	40%	
Բարձրագույն	48	48%	
Տարիք			
18-22	78	45%	Chi-square test, chi-square=21.768, p=0.000
23-26	32	36%	
27-30	19	18%	

Գյուղաբնական երիտասարդների շրջանում ավելի մեծ է երիտասարդների թիվը, որոնք բոլորովին իրազեկված չեն մարզպետարանի գործունեությունից (47%), քան քաղաքաբնակների շրջանում (31%): Նմանապես, գյուղաբնակների շրջանում ավելի շատ են իրենց համայնքում գործող ՔՀԿ-ների և միջազգային կառույցների գործունեության վերաբերյալ բոլորովին չիրազեկվածները (60% և 69% համապատասխանաբար), քան քաղաքաբնակների շրջանում (43% և 50% համապատասխանաբար):

Աղյուսակ 11. Տարբեր կառույցների վերաբերյալ իրազեկվածությունը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Բոլորովին իրազեկված չեն %	Նշանակալիության թեստ
Իրազեկվածությունը կառույցների գործունեությունից	**147**	**40%**	**n/a**
Բնակավայր			

Մարզպետարան			
Գյուղական	96	47%	Kruskal-Wallis's test, p = 0.002
Քաղաքային	51	31%	
ՔՀԿ-ներ			
Գյուղական	123	60%	Kruskal-Wallis's test, p = 0.001
Քաղաքային	71	43%	
Միջազգային կազմակերպություններ			
Գյուղական	140	69%	Kruskal-Wallis's test, p = 0.000
Քաղաքային	82	50%	

Որակական հարցազրույցների շրջանակում ՏԻՄ ներկայացուցչի գնահատմամբ՝ ՀՀ կառավարության կողմից մշակված երիտասարդական քաղաքականությունն ընդհանուր է և բարդ՝ առանձին համայնքներում տեղայնացնելու առումով: Միաժամանակ, միջազգային կառույցների ներկայացուցիչները շեշտադրում են երիտասարդական քաղաքականությամբ նախատեսված համայնքների ու միջոցառումների ընդլայնման անհրաժեշտությունը:

«Տարբեր համայնքներում տարբեր է: Ես ուզում էի տեղայնացնել ու բարդ է շատ: Շատ ծրագրեր կան, մի գյուղի համար ուրիշ բան պետք է անես, Երևանի համար կամ մեծ քաղաքների համար՝ ուրիշ: Իրենք ընդհանրական բաներ են վերցրել: Այդ առումով դժվար է»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Կարելի է մարզերի քանակը շատացնել, այնտեղ շատ լավ ծրագրեր են: Ճիշտ է՝ դա բաց է բոլորի համար, բայց հասկանալի է, որ բոլորս ունենք սահմանափակ ռեսուրսներ: Երևի թե ռեսուրսները էլ ավելի լինեն, ավելի շատ կկարողանանանք երիտասարդներ ներգրավել, ավելի շատ համայքներից ներգրավվել»:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

ՏԻՄ ներկայացուցիչները խորին հարցազրույցներում ընդգծում են ՔՀԿ-ների դերը երիտասարդների իրազեկվածության բարձրացման առումով, քանի որ այդ կառույցներն ավելի իրազեկված են երիտասարդների խնդիրների ու պահանջմունքների, ինչպես նաև ծրագրերի և դրանց արդյունավետության մասով: Նրանք նաև ընդգծում են երիտասարդների կարիքներին համապատասխան ծրագրեր իրականացնելու անհրաժեշտությունը: Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներն ընդգծում են երիտասարդական ծարգրերի ու միջոցառումների մասին տեղեկատվության թիրախային տարածման անհրաժեշտությունը:

«Ծրագրերի հետ կապված ավելի շատ նախապատվություն տրվում է ՀԿ-ներին, որովհետև իրենք ամեն օր երիտասարդների հետ են շփվում, ավելի լավ են հասկանում, թե ինչ ծրագրեր անեն, ու որոնք են ավելի արդյունավետ»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Հիմա ավելի շատ երիտասարդների առաջարկներն ենք հաշվի առնվում ու ավելի շատ ուզում ենք, որ երիտասարդները իրենց հետաքրքրությունը բերեն, իրենք էլ փորձեն իրականացնել այն ծրագրերը, որոնք ուզում են: Համայնքապետարանը իր հերթին մի քանի նախաձեռնություններ ունի, բայց ուզում է ֆինանսավորել այնպիսի նախաձեռնություններ, որոնք երիտասարդներն են ուզում, այսինքն իրենք կբերեն, կառաջարկեն, ու դրանք կֆինանսավորվեն»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Պետք է այն հարթակներով լինի, որոնք երտասարդները ավելի կարևորում են, իրենց ավելի հետաքրքիր է, քանի որ ամեն թիրախ ունի իր նախընտրելի մեթոդները, տեղեկանալու հարթակները: Կարևոր է որ երիտասարդներին հասցնենք այն հարթակներով, որոնք իրենք կարևորում են»:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

Որակական հարցազրույցները թույլ տվեցին նաև բացահայտել երիտասարդների իրազեկվածությանն առնչվող մի շարք խնդիրներ: Մասնավորպես, ՏԻՄ ներկայացուցիչների կողմից մատնանշվեց երիտասարդների ցածր տեղեկացվածության խնդիրը, ինչը ցածր մասնակցության հիմնական պատճառներից է: Ցածր իրազեկվածության հիմնական պատճառներից են երիտասարդների շրջանում հետաքրքրության բացակայությունը և կենտրոնից հեռու համայնքներում տեղեկատվության հասանելիության խնդիրը: Միևնույն ժամանակ, կարևորվում է առցանց հարթակների, կրթական կառույցների և համայնքային կազմակերպությունների դերը՝ երիտասարդների իրազեկվածության բարձրացման գործում:

«Հիմնականում պատճառաբանում են, որ տեղյակ չեն միջոցառումներից: Ակտիվ կորիզ կա, որը հիմա ակտիվ աշխատում է, բայց մեծամասնությունն ասում է, որ տեղյակ չեն: Որքան հարթակներ կան, որտեղ երիտասարդներ կան, մենք տարածում ենք, բայց թե ինչու չեն տեղեկանում, դա հարց է մնում: Երևի չեն հետաքրքրվում, կամ չեն հետևում այն էջերին, որ պետք է»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Մարդիկ, ովքեր ակտիվ են, ովքեր քչից-շատից ոլորտում կան, իրենք բավականին տեղեկացված են: Տասը բալային համակարգով երևի ինով տեղեկացված են: Իսկ մարդիկ, ովքեր այդ դաշտում չեն, իրենց չի հետաքրքրում, ականջի պոչով հնարավոր է լսած լինեն կամ ինչ-որ նկարներ տեսած: Այսինքն՝ այստեղ մենք խնդիր ունենք այդ մարդկանց դաշտ բերելու: ՀԿ-ների մեծ մասը չի մտածում, որ, կարող է, Գավառի յոթերորդ դպրոցում կան երեխաներ, ովքեր լրիվ պոտենցիալ ունեն, ուղղակի իրենց ծնողները ու իրենք տեղյակ չեն, չեն վստահում այդ ոլորտին, դրա համար իրանց բալիկը չի մասնակցում: Ամեն դեպքում, պետք է մարդկանց հետ երկխոսության մեջ լինել: Ակտիվները կան, միշտ էլ շատ են, իսկ այն մարդիկ, ովքեր տեղեկացված չեն, իրենց հետ անհատական աշխատանք է պահանջվում: Պետք է նաև անհատական աշխատանքներում ընդգրկել ծնողներին: Շատ կարևոր է, որովհետև յուրաքանչյուր ծնողի համար շատ կարևոր է ու նպաստավոր, երբ ինքը իմանում է՝ իր երեխան ուր է գնում, ինչ է անում:»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Տեղեկացվածության աղբյուրները բնականաբար սոցյալական ցանցերն են, համայնքապետարանի պաշտոնական կայքը: Երիտադարդները տեղեկատվության փոխանակման աղբյուրներն են: Եթե մենք ինչ-որ միջոցառում ենք հրապարակում, իրենք էլ իրենց Ֆեյսբուքում, Ինստագրամում տարածում են: Մենք փորձում ենք նաև տարածել մեր համայնքային կազակերպությունների միջոցով, իրենք էլ շատ ակտիվ դերակատարություն ունեն՝ գրադարանները, մշակույթի տները»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Լինում են մարդիկ, որոնց ինֆորմացիան չի հասնում: Դրանք մարդիկ են, որոնք հեռու բնակավայրերում են՝ Գեղարքունիք գյուղում, Ծաղկաշենում, որոնք լոգիստիկ կապեր չունեն Գավառի հետ, ինֆորմացիան չի հասնում երիտասարդին, աշակերտին, պատանուն»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Մենք հիմա աշխատում ենք մի մեթոդով, որը կոչվում է փաթիլի մոդելը, երբ մի երիտասարդ ծանոթանում է այստեղ կատարվող միջոցառումներին և փորձում է հինգ երիտասարդի տեղեկացնել: Քանի որ կա անվստահություն ՀԿ-ների հանդեպ, այս մոդելը այդքան էլ արդյունավետ չի աշխատում: Բայց ժամանակ առ ժամանակ աճելու հավանականություն ունի, այս մեթոդը կնպաստի մնացածների ներգրավմանը: Մենք հիմնականում օգտագործում ենք այս մոդելը, քանի որ Գավառը դեռ փակ է այս առումով»:

ՔՀԿ ներկայացուցիչ

ՖԽՔ-ներին մասնակցած երիտասարդները ևս նշում են իրենց և իրենց համայնքներում բնակվող այլ երիտասարդների ցածր տեղեկացվածության խնդրի մասին, որը խոչընդոտում է ծրագրերին ու միջոցառումներին մասնակցելուն: Որպես տեղեկացված չլինելու հիմնական պատճառ՝ նշվում է երիտասարդների շրջանում հետաքրքրության բացակայությունը: Երիտասարդները կարևորում են բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների դերը՝ երիտասարդական ծրագրերի ու միջոցառումների վերաբերյալ իրազեկվածության ապահովման գործում: Նրանք իրազեկվածության բարձրացման գործում շեշտադրում են նաև համայնքներում և կրթական հաստատություններում հանդիպումների ու սեմինարների կազմակերպումը, ինչպես նաև առցանց հարթակների և պաստառների միջոցով տեղեկատվության տարածումը:

«Իրականում ամեն ինչ արվում է: Հարցն այն է, թե որքանով ենք տեղեկացված ու տեղեկացված չենք: Ես մինչև չեմ գնացել համալսարան, տեղեկացված չեմ եղել ընդհանրապես, թե ՀԿ-ն ինչ է, ինչ գործունեություն է ծավալում, ու թե Գավառում որքան հնարավորություններ կան, որ մենք կարող ենք մասնակցել: Դա այն փուլն էր, որ ես ասում էի՝ ամեն ինչին պետք է մասնակցեմ: Դպրոցի երեխաները ընդհանրապես տեղյակ չեն, թե գյուղից հետո ինչ է կատարվում»:

ՖԽՔ մասնակից

«Երևի մեկը պիտի լինի, որ ինֆորմացիա տրամադրի, որ մենք չենք իմանում: Դա կարելի է շաբաթը մի անգամ, օրինակ, ծրագրեր է լինում, հիմա մենք ունենք գյուղապետ, այդտեղ աշխատողներ կան, կարելի է շաբաթը մի անգամ հավաքույթ անել ու ասել սենց-սենց բան կա»:

ՖԽՔ մասնակից

«Օրինակ, ես ուսանողների համար մի հատ չատ եմ բացել, ինչ ծրագիր լինում է այստեղից դուրս, ես այդ չատում անպայման ներառում եմ: Բացի դա, կիսվում եմ սթորի բաժնում: Կարող ենք համագյուղացիների համար էլ չատ բացել»:

ՖԽՔ մասնակից

«Երիտասարդներ կան, որ զբաղվածությունը շատ է, ժամանակի մեջ չեն տեղավորվում: Ինֆորմացիան տրամադրվում է, բայց շատ ուշ են տեղեկանում ու չեն կարողանում մի բան անեն»:

ՖԽՔ մասնակից

«Ով գյուղից դուրս ինչ-որ բաների է մասնակցել, տեղեկացված է, ով տարված է առօրյաով, տեղեկացված չէ»:

ՖԽՔ մասնակից

«Օրինակ, դպրոցում ես սեմինարներ կանցկացնեի, երեխաների մոտ հետաքրքրություն կառաջացնեի, կպատմեի, թե ինչ է կամավորությունը, կպատմեի երիտասարդական ծրագրերի մասին, իրազեկվածությունը կսկսեի բարձրացնել երեխաների մոտ, հետաքրքրություն կառաջանար»:

ՖԽՔ մասնակից

«Երիտասարդական կենտրոն կբացեի, մոտիվացնող քայլեր կմշակեի, օրինակ, այս ծրագրին մասնակցելով այս հմտությունները ձեռք կբերեք, դա էլ հետագայում ձեզ կօգնի համալսարան ընդունվելու համար, նման մոտիցավնող քայլեր»:

ՖԽՔ մասնակից

«Կարելի է մի քիչ ավելի շատացնել երիատասարդական կենտրոններում միջոցառումները, քանի որ եղածը կարող է մնացածի նախասիրությունների մեջ չի մտնում, ու հենց դա է պատճառը, որ քիչ են տեղեկանում»:

ՖԽՔ մասնակից

«Լավ կլինի, որ կազմակերպությունները ուղարկեն մարդիկ, ովքեր կբացատրեն իմաստը, որ երիտասարդները հասկանան՝ արժի մասնակցել թե չէ: Օդում թռուցիկ ասելը ուրիշ է, ավելի հստակ ծանոթանալը ուրիշ է»:

ՖԽՔ մասնակից

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քանակական հարցման շրջանակում ուսումնասիրվել են նաև երիտասարդների քաղաքացիական մասնակցության առանձնահատկությունները: Ինչպես իրազեկվածության դեպքում, այստեղ ևս արձանագրվել է մասնակցության ցածր մակարդակ:

Հարցվողների մեծամասնությունը (85%) վերջին 6 ամիսների ընթացքում չի իրականացրել քաղաքացիական մասնակցության ոչ մի գործողություն: Միայն 10% է իրականացրել կամավորական գործունեություն, և 5%-ը մասնակցել է ՔՀԿ-ների ծրագրերին: Միևնույն ժամանակ, երիտասարդների ճնշող մեծամասնությունը (93%) չի անդամակցում որևէ կառույցի: Միայն 4%-ն է նշել, որ անդամակցում է Գավառ համայնքում գործող ՔՀԿ-ի, և 3%-ը՝ կրոնական կազմակերպության:

Գծապատկեր 16. Վերջին 6 ամիսների ընթացքում Ձեր համայնքում իրականացրե՞լ եք նշվածների որևէ մեկը (n=369)



Թեև երիտասարդների կեսից ավելին (55%) նշել է, որ մասնակցել է ՏԻՄ վերջին ընտրություններին, մինույն ժամանակ, նշանակալի տոկոսն (45%) ընտրություններին չի մասնակցել: Չմասնակցելու հիմնական պատճառներն են ընտրելու իրավունք չունենալը (49%), համայնքում չլինելը (31%) և հետաքրքրված չլինելը (20%):

Գծապատկեր 17. Մասնակցե՞լ եք արդյոք ՏԻՄ վերջին ընտրություններին (n=369)



Գծապատկեր 18. Եթե ոչ, ապա ինչու՞ (n=201)



Երիտասարդները պասիվ են նաև երիտասարդական ծրագրերին և միջոցառումների մասնակցելու առումով: Հարցվողների միայն 19%-ն է երբևէ մասնակցել իր համայնքում իրականացված որևէ երիտասարդական ծրագրի կամ միջոցառման: Ամենահաճախը նշված ծրագրերն ու միջոցառումներն են Ֆեստիվառը (15%) և Երիտասարդների օրը (19%): Ինչ վերաբերում է չմասնակցելու պատճառներին, ամենահաճախը նշվել են ժամանակ չունենալը (47%), բավականաչափ տեղեկացված չլինելը (21%) և ցանկություն չունենալը (19%):

Գծապատկեր 19. Երբևէ մասնակցե՞լ եք Ձեր համայնքում իրականացվող որևէ երիտասարդական ծրագրի կամ միջոցառման (n=369)



Գծապատկեր 20. Եթե ոչ, ապա ինչու՞ (n=277)



Հարցմանը մասնակցած երիտասարդները հիմնականում միջին գնահատականներ են տվել իրենց համայնքում իրականացվող երիտասարդական ծրագրերին ու միջոցառումներին: Ամենաբարձրը գնահատվել է մասնակցության հասանելիությունը (31%-ը գնահատել է 5), իսկ ամենացածրը՝ համապատասխանությունը երիտասարդների իրական կարիքներին (19%-ը գնահատել է 5):

Աղյուսակ 12. 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նվազագույն, իսկ 5-ը առավելագույն գնահատականն է, գնահատեք Ձեր համայնքում իրականացվող երիտասարդական ծրագրերը/միջոցառումները հետևյալ չափանիշներով

Չափանիշ	1 գնահատողների %	5 գնահատողների %	Միջին գնահատական	Ստանդարտ շեղում	N
Արդյունավետություն	3.8%	27%	3.5	1.1	365
Համապատասխանություն երիտասարդների իրական կարիքներին	6.4%	19%	3.4	1.1	360
Բովանակության և ձևաչափի հետաքրքրություն	6.1%	20%	3.4	1.1	360
Բովանդակության որակ	5%	24%	3.5	1.1	362
Երիտասարդների ներգրավվածություն	7%	29%	3.6	1.2	363
Մասնակցության հասանելիություն	9%	31%	3.5	1.2	362
Ներառականություն	11%	19%	3.2	1.2	359

Երիտասարդների միայն 8%-ն է իր համայնքում մասնակցել որոշումների կայացման կամ հանրային քաղաքականության մշակման որևէ գործընթացի: Չմասնակցելու հիմնական պատճառներն են ժամանակ չունենալը (56%), բավականաչափ տեղեկացված չլինելը (55%) և ցանկություն չունենալը (40%): Մասնակցություն ունեցած երիտասարդների շրջանում մասնակցության ամենահաճախը նշված ձևերն են դեմ առ դեմ հանրային քննարկումները (27%), երիտասարդական ծրագրերն ու միջոցառումները (25%) և ավագանու նիստերը (25%): Հատկանշական է, որ մասնակցություն ունեցած երիտասարդների մեծամասնությունն (61%) իր մասնակցությունը գնահատում է որոշ չափով որոշիչ:

Գծապատկեր 21. Երբևէ մասնակցե՞լ եք Ձեր համայնքում որոշումների կայացմանը/հանրային քաղաքականության մշակմանը (n=369)



Գծապատկեր 22. Եթե ոչ, ի՞նչն է պատճառը (n=234)



Գծապատկեր 23. Եթե այո, ապա ինչպե՞ս եք մասնակցել (n=44)



Գծապատկեր 24. Ըստ Ձեզ՝ որքանո՞վ էր որոշիչ Ձեր մասնակցությունն այդ գործընթացին (n=29)



Տվյալների վերլուծության արդյունքում բացահայտվել են երիտասարդների քաղաքացիական մասնակցության մի շարք առանձնահատկություններ՝ կախված տարիքից, կրթությունից և զբաղվածությունից: 23-26 և 27-30 տարեկանների շրջանում ավելի մեծ է ՏԻՄ վերջին ընտրություններին մասնակցածների տոկոսը (65% և 73% համապատասխանաբար), մինչդեռ 18-22 տարեկանների շրջանում այդ տոկոսն էականորեն ավելի ցածր է (17%): Միևնույն ժամանակ, բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում ավելի մեծ է մասնակցածների տոկոսը (64%)՝ համեմատած միջնակարգ (37%) և միջին մասնագիտական կրթություն ունեցողների հետ (47%): Տարբերություններ են արձանագրվել նաև ըստ հարցվողների զբաղվածության: Պետական կառույցների աշխատողների (77%) ու տնային տնտեսուհիների (55%) ավելի մեծ տոկոս է մասնակցել ՏԻՄ վերջին ընտրություններին, քան ուսանողների (12%):

Աղյուսակ 13. Մասնակցությունը ՏԻՄ վերջին ընտրություններին՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Մասնակցածների %	Նշանակալիության թեստ
Մասնակցությունը ՏԻՄ վերջին ընտրություններին	**166**	**45%**	**n/a**
Գյուղական	61	30%	
Կրթություն			
Միջնակարգ	83	37%	Chi-square test, chi-square=19.407, p=0.000
Միջին մասնագիտական	20	47%	
Բարձրագույն	63	62%	
Տարիք			
18-22	30	17%	Chi-square test, chi-square=101.753, p=0.000
23-26	58	65%	
27-30	78	73%	
Զբաղվածություն			
Աշխատում եմ մասնավոր ընկերությունում	18	43%	Chi-square test, chi-square=62.953, p=0.000
Աշխատում եմ պետական կառույցում	33	77%	
Ուսանող/աշակերտ եմ	11	12%	
Գործազուրկ եմ	14	50%	
Տնային տնտեսուհի	64	55%	
Ինքնազբաղված	25	53%	
Ձեռնարկատեր	1	25%	

Համայնքում իրականացվող երիտասարդական ծրագրերին և միջոցառումներին մասնակցության առումով ևս տարբեր խմբերի մոտ առկա են առանձնահատկություններ: 18-22 տարեկանների ավելի մեծ տոկոսն է մասնակցել այդ ծրագրերին և միջոցառումներին, քան 23-26 և 27-30 տարեկաններինը: Այս առումով

ամենաակտիվն են ուսանողները (44%), իսկ ամենապասիվը՝ տնային տնտեսուհիները (7%):

Աղյուսակ 14. Մասնակցությունը երիտասարդական ծրագրերին և միջոցառումներին՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Մասնակցածների տոկոս%	Նշանակալիության թեստ
Մասնակցությունը երիտասարդական ծրագրերին և միջոցառումներին	**71**	**19%**	**n/a**
Տարիք			
18-22	53	31%	Chi-square test, chi-square=27.840, p=0.000
23-26	6	7%	
27-30	12	11%	
Զբաղվածություն			
Աշխատում եմ մասնավոր ընկերությունում	7	17%	Chi-square test, chi-square=48.727, p=0.000
Աշխատում եմ պետական կառույցում	6	14%	
Ուսանող/աշակերտ եմ	39	44%	
Գործազուրկ եմ	4	14%	
Տնային տնտեսուհի	8	7%	
Ինքնազբաղված	6	13%	
Ձեռնարկատեր	1	25%	

Գյուղաբնակ երիտասարդներն ավելի ցածր են գնահատել իրենց համայնքում իրականացվող երիտասարդական ծրագրերն և միջոցառումներն՝ ըստ մասնակցության հասանելիության: Քաղաքում բնակվող երիտասարդների 29%-ն այն գնահատել է 3-ից ցածր, իսկ գյուղաբնակների՝ 14%-ը:

Աղյուսակ 15. Երիտասարդական ծրագրերի և միջոցառումների հասանելիության գնահատումը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	3-ից ցածր գնահատածների %	Նշանակալիության թեստ
Երիտասարդական ծրագրերի և միջոցառումների հասանելիության գնահատում	**80**	**21%**	**n/a**
Բնակավայր			
Քաղաքային	23	14%	Mann-Whitney test, p=0.033
Գյուղական	57	29%	

Տարբեր կրթական մակարդակ ունեցող երիտասարդները տարբերվում են իրենց համայնքում հանրային քաղաքականության մշակման գործում երիտասարդների ունեցած ազդեցության գնահատման առումով: Միջին մասնագիտական (51%) և բարձրագույն կրթություն (50%) ունեցողների ավելի մեծ տոկոսն է կարծում, որ իր համայնքում երիտասարդներն ունեն շատ մեծ ազդեցություն՝ համեմատած միջնակարգ կրթություն ունեցողների հետ (27%): Տարբերություններ են առկա նաև ըստ սեռի: Իգական սեռի երիտասարդներն ավելի շատ են հակված երիտասարդների ազդեցությունը գնահատել շատ մեծ (39%)՝ ի տարբերություն արական սեռի երիտասարդների (27%):

Աղյուսակ 16. Երիտասարդական ազդեցության գնահատումը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	«Շատ մեծ ազդեցություն» պատասխանածների %	Նշանակալիության թեստ
Երիտասարդների ազդեցության գնահատում	**134**	**36%**	**n/a**
Կրթություն			
Միջնակարգ	60	27%	Kruskal-Wallis's test, p=0.000
Միջին մասնագիտական	22	51%	
Բարձրագույն	52	51%	
Սեռ			
Արական	25	27%	Mann-Whitney test, p=0.005
Իգական	109	39%	

Որակական հարցազրույցների արդյունքում պարզվեց, որ Գավառի համայնքապետարանում 2023 թ.-ից առկա է երիտասարդական աշխատողի հաստիք, ով իրականացնում է երիտասարդական ծրագրերն ու միջոցառումները: Երիտասարդներին ուղղված աշխատանքներով զբաղվում է նաև համայնքապետարանի Մշակույթի բաժինը: Համայնքապետարանը համագործակցում է Երիտասարդների տան և տեղական ՔՀԿ-ների հետ՝ երիտասարդական ծրագրեր մշակելու և իրականացնելու հարցում: Աշխատանքներ են տարվում նաև երիտասարդական խորհուրդների ձևավորման, ինչպես նաև ավագանու նիստերի թվայնացման և արդիականացման աշխատանքներում երիտասարդների ներգրավման ուղղությամբ: Համայնքերում քաղաքացիական մասնակցության խթանմանն ուղղված ծրագրերից է «ՏԻՄ-բնակիչ կապ»-ը, որի նպատակն է մեծացնել բնակչության մասնակցության մակարդակը ավագանու նիստերին, ինչպես նաև նրանց իրազեկվածությունը բյուջետավորման գործընթացների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, առանցքային տեղեկատուներ և երիտասարդներն ընդգծում են վերջին տարիներին Գավառ համայնքում երիտասարդների դերի աճի մասին՝

կապված տարբեր միջոցառումներում ու ծրագրերին նրանց մասնակցության աճի հետ: ՖԽՔ-ների մասնակից երիտասարդները ևս նշում են վերջին տարիներին Գավառում իրականացվող միջոցառումների թվի, ինչպես նաև երիտասարդության՝ դրանց մասնակցության աճի մասին:

«Գավառ համայնքը վերջին երկուսից երեք տարիների ընթացքում բավականին ակտիվացել է երիտասարդների շնորհիվ: Մեր փորձից ելնելով ասեմ, որ լինում ենք տարբեր ֆորումների, կոնֆերանսների, այնտեղ խոսվում է Գավառի մասին, մարդիկ ասում են, որ մենք իմացանք, որ Ձեզ մոտ այս միջոցառումը կար: Գավառի տեղը, կոպիտ ասած, մինչև վերջին երևի թե հինգ տարին ոչ ոք չգիտեր: Իսկ հիմա շատերը գիտեն, գալիս-գնում են, դուրները գալիս է, նույնիսկ հարցնում են, թե ինչպես կարող ենք գալ: Այդ ամենը, կածում եմ, հատկապես երիտասարդների շնորհիվ է, որովհետև մենք տեսնում ենք՝ կազմակերպչական հարցերում ինչ աջակցություն ունի երիտասարդությունը»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Կարող եմ նշել, որ մեր ծրագրի շրջանակներում ապրիլ-մայիս ամիսներին ունեինք միջոցառում, որի ընթացքում 500 երիտասարդ է ներգրավված եղել Հայաստանի բոլոր մարզերից: Այդ միջոցառման ընթացքում մենք քննարկում էինք երդասարդության օրենքը: Կարող եմ ասել, որ շատ ակտիվ մասնակցել են երիտասարդները հենց Գավառ համայնքից, իրենց առաջարկներն են արել, տեղեկացել են, թե ինչու է կարևոր ունենալ երիտասարդության մասին օրենք»:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

«Առաջին անգամ վերջին 10 տարվա կտրվածքով 2022 թ. Գավառում կազմակերպվեց ֆեստ: Գավառ խոշորացված համայնքից քիչ էր ներգրավվածությունը, համարյա մարդ չկար: Գավառում այս տարվա ու անցած տարվա ֆեստիվառին զգացվում էր, որ ինչ-որ բան փոխվել է, որովհետև մարդկանց ներգրավվածությունն է շատացել, հայացքների քննադատական տոները քչացել են»:
ՖԽՔ մասնակից

«Ինձ թվում է՝ հիմա երիտասարդները ավելի ակտիվ են մասնակցում համայնքի կյանքին, քան սրանից տաս տարի առաջ: Կարծում եմ՝ կկարողանան ինչ-որ բան փոխել»:
ՖԽՔ մասնակից

ՔՀԿ-ների ներկայացուցիչները հիմնականում դրական են գնահատում երիտասարդական ծրագրերի ու միջոցառումների արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, շեշտադրվում է ծրագրերի երկարաժամկետ ազդեցության գնահատման անհրաժեշտությունը:

«Արդյունավետ են, որովհետեև նպաստում են իրավական, տնտեսական առումով ներգրավման, ադապտացիայի, թեկուզ արցախցիների: Այդ բոլոր տեսանկյուններից իրենք նպաստում են, որ մարդիկ կարողանան իրենց կյանքը կազմակերպել: Ես չեմ կարող ասել, թե յուրաքանչյուր երիտասարդ կոնկրետ ինչ է վերցնում: Բայց միանշանակ մեկ սկզբունք կա, որ իրենք կարողանում են իրենց կյանքի որակը ավելի լավը դարձնել, դառնում են ավելի ճկուն ու հարմարվող»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Շատ լավ ծրագրեր կան, որոնք տալիս են կետային ազդեցություն՝ մի քանի օրվա կամ ամսվա: Դրանք հիմնականում խոշոր միջոցառումներն են, որոնք մեծ աժիոտաժ են առաջացնում, բայց հետո դժվար է

վերհանել իրենց հեռակայունությունը: Պետք է մեխանիզմ մտածել, որով մենք կգնահատենք 1 տարի, 3 տարի, 5 տարի հետո ծրագրի ազդեցությունը»:

ՔՀԿ ներկայացուցիչ

ՖԽՔ-ների մասնակից երիտասարդները ևս նշում են երիտասարդական ծրագրերի ու միջոցառումների արդյունավետության մասին: Այդ ծրագրերը երիտասարդներին տալիս են մի շարք առավելություններ՝ համայնքային կյանքում ներգրավվելու, սոցիալական կապերի ձեռքբերման, գիտելիքների ու կարողությունների զարգացման առումով:

«Ավելի ուշադրություն են դարձնում անհատի վրա, անձնական հատկությունների վրա: Օրինակ, դպրոցում կամ քոլեջներում շատ հնարավոր է, որ անձնական որակները հաշվի չառնեն, հաշվի առնեն դաս պատմելը, գնահատականը: Երիտասարդական կենտրոններում կենտրոնանում են անհատի վրա, իր գիտելիքների, ունակությունների վրա»:

ՖԽՔ մասնակից

«Ինձ թվում է, որ հետաքրքրություն են առաջացնում երիտասարդների մոտ, ու իրենք էլ են ուզում, որ ինչ-որ բանով օգնեն իրենք համայնքին»:

ՖԽՔ մասնակից

«Ավելի է հետաքրքրացնում երիտասարդների կյանքը, կտրում է գարեջրատներից ու հիմնահարցերով զբաղվելուն տանում»:

ՖԽՔ մասնակից

«Նոր ընկերներ են ձեռք բերում, շփվում են, նաև նոր բան են սովորում, փորձի փոխանակում են ունենում»:

ՖԽՔ մասնակից

«Դպրոցի շրջանակներում բանավեճերի շատ ենք մասնակցել, արդյունվետ է եղել նրանով, որ նոր դպրոցներ ենք գնացել, նոր ընկերներ, նոր շրջապատ ձեռք բերել: Բացի այդ, բանավեճը շատ ակտիվ խումբ է»:

ՖԽՔ մասնակից

«Շատ լավ էին տպավորությունները, մոտիվացնող էին ամենակարևորը, իրենք էլ ամեն մեկը մի փոքր գյուղից էին, իրենց պատմություններով մոտիվացնում էին մարդկանց: Մեկը իրենց գյուղում տուրիստական բան էր կազմակերպել ու պլանավորում էին գյուղը դարձնել զբոսաշրջության հետ կապված գյուղ, բավականին հետաքրքիր էր: Այդ պահին քո մտքովել է անցնում՝ ինչու մեր գյուղում էլ չանենք, ու լիքը խնդիրների ենք բախվում: Ես որպես երիտասարդ աղջիկ, գյուղում ինչ-որ բան ես պլանավորում անել, մեր կարծրատիպը մի քիչ ուրիշ կերպ է, մարդիկ ուրիշ ձև են մտածում, այդ ամեն ինչը շատ է կոտրում»:

ՖԽՔ մասնակից

Առանցքային տեղեկատուները կարևորում են երիտասարդական կառույցների ստեղծումն ու ակտիվացումը՝ համայնքային կյանքում երիտասարդների ներգրավվածության բարձրացման ուղղությամբ, երիտասարդների ցանցերի ավելի ակտիվ ներգրավումը, ինչպես նաև ծրագրերի հասցեականության ապահովումը՝ երիտասարդների հետաքրքրություններին համապատասխան: ՖԽՔ մասնակիցներն ընդգծում են ծրագրերի կազմակերպման կարևորությունը տարբեր համայնքներում՝ Գավառ քաղաքից բացի:

«Կարող են լինել և վերապատրաստման ծրագրեր, և հանրային իրազեկությունը բարձացնելու ծրագրեր, դրամաշնորային ծրագրեր, որ բոլորը միավորվում են և ընդհանուր համակործակցում են, և երդասարդները հենց պրակտիկ գործունեության մեջ տեսնում են դրա առավելությունը: Կարող են լինել, օրինակ, երիտասարդական ակումբներ տարբեր համայքում»:
Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

«Իրենք պետք է գնան, պատմեն, ներկայացնեն, իրենք պետք է փոփոխեն իրենց շրջապատի երիտասարդների մտածելակերպը: Եթե երիտասարդը եկավ, տեսավ և գնաց, պատմեց, հաջորդ անգամ մի երիտասարդի ևս բերեց, այդպես ձնագնդի էֆեկտով կարող է ավելանալ: Մենք ինչքան ուզում է խոսենք, ասենք, եթե թիրախային շահառուն ինքը մտավ, տեսավ, որ մենք պատրաստ չենք, ինքն էլ չի գա, իր հետևից էլ մյուսներին կտանի»:
ՏԻՄ ներկայացուցիչ

«Ոչ թե միջոցառումը Գավառում անել ու Գեղարքունիի ամբողջ մարզը կանչել, այլ կարելի է վերցնել երեք գյուղ կամ չորս գյուղ, այդտեղ կազմակերպել, փոքր-փոքր կազմակերպել»:
ՖԽՔ մասնակից

«Մասնակացությունը վերջին մի տարվա ընթացքում աճում է, դա պայմանավորված է նաև թեմայով: Կան միջոցառումներ, որոնք ընդանրապես երիտասարդներին չեն հետաքրքրում: Այստեղ կազմակերպությունների դերը շատ մեծ է, որպեսզի կատարված միջոցառումները լինեն ըստ կարիքի: Հիմնականում կարքների գնահատում մասնակիցների կողմից չի արվում, դրա համար հետաքրքրությունն է կորում: Կարիք կա նախնառաջ անել կարիքների գնահատում ու հասկանալ՝ տարածաշրջանի երիտաղարդներին ինչ է հարկավոր, ինչ հմտություններ կուզենան զարգացնել»:
ՔՀԿ ներկայացուցիչ

ՏԻՄ ներկայացուցիչների հետ խորին հացրազրույցներից պարզ դարձավ, որ Գավառի համայնքապետարանն իրականացնում է մի շարք ծրագրեր՝ ուղղված որոշումների կայացման երիտասարդների քաղաքացիական մասնակցության բարձրացմանը: Մասնավորապես, 2023 թ. երիտասարդների մասնակցությամբ կազմվել է «Երիտասարդական ոլորտի զարգացման տարեկան գործողությունների պլան»-ը: 2024 թ. իրականացվել է մասնակցային բյուջետավորման ծրագիրը, որը համայնքի բնակիչներին, այդ թվում՝ երիտասարդներին, հնավորություն է տվել ձևակերպել որևէ հիմնախնդիր, առաջարկել լուծումներ և դրանց իրականացման համար ստանալ ֆինանսավորում: Չնայած երիտասարդների իրազեկվածությունը որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացներից գնահատվում է ցածր, սակայն վերջին տարվա ընթացքում երիտասարդական քաղաքականության մշակումը

նպաստել է, որպեսզի համայնքներում ավելի շատ երիտասարդեր հետաքրքրվեն այդ գործընթացով:

«Վերջին ավագանու նիստին ես ականատես եղա, որ երիտասարդները զեկուցում են, ավագանու օրակարգում հարց են դնում: Որոշումների կայացման գործընթացում շատ կարևոր է, որ մեր երիտասարդները մեզ օգնում են բնակավայրերում Town hall անցկացնել խնդիրներ վերհանելու համար: Առաջիկայում նաև կստեղծվի համայնքի ղեկավարին կից երիտաղարդական խորհուրդը՝ որպես առանձին միավոր»

ՏԻՄ ներկայացուցիչ

Այդուհանդերձ, չնայած վերոնշյալ քայլերին, առանցքային տեղեկատուները երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացներում գնահատում են ցածր: ՔՀԿ-ների ներկայացուցիչներն այս հարցում կարևորում են այս ուղղությամբ ՏԻՄ-երի աշխատանքի ակտիվացման անհրաժեշտությունը:

«Այս ամենը դեռ նոր է սկսվել, ես չեմ ասել, որ, օրինակ տասը բալային համակարգով յոթ միավորով ընդգրկված են: Չորս միավորով են ընդգրկված: Երբ հարցնում ես, թե երեխաներից քանիսն են ավագանու նիստերին մասնակցել կամ քանիսն են կարդացել ՏԻՄ մասին օրենքը, չեմ կարծում, որ գոնե երեսուն տոկոսը կարդացած կլինի կամ գոնե տեղյակ կլինի: Բայց սա սկիզբն է, հասկանալի է ինչ-որ տեղ: Այդ ուղղությամբ, իրոք, շատ աշխատելու տեղ կա, ու արվում է այդ աշխատանքը»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«ՏԻՄ-ի հետ կապված աշխատանքներում ծանրությունը կարծես միայն մի բաժնի վրա ընկած լինի: Երբ ասում ենք՝ երիտասարդների հետ աշխատանք է իրականացնում ՏԻՄ-ը, ես պատկերացնում եմ ընդամենը մի քանի հոգու: Կարծես մենակ այդ մի բաժնի վրա է այս պահին ծանրությունն ընկած: Չգիտեմ՝ ինչի հետ է կապված, հնարավոր է՝ ռեսուրսային խնդիր կա: Մեր համայնքապետարանը, համեմատած այլ համայնքների համայնքապետարանների հետ, բավականին բաց է երիտասարդների հետ համագործակցության առումով, բայց փաստացի ծանրությունը կամ այդ մի բաժնի վրա է ընկնում, կամ 3-4 հոգու: Ինձ թվում է՝ արժի մի շարք հաստիքներ ավելացնել»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Ներգրավված են հասարակական կազմակերպություններում որևէ կերպ ներգրավվածություն ունեցող երիտասարդները կամ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շահառուները: Մնացածը, եթե իհարկե բարեկամական կապեր չկան, վստահ եմ, տեղյակ չեն: Եթե տոկոսով նայենք, մաքսիմում տաս կամ տասնհինգ տոկոսն են համայնքի»:

ՔՀԿ ներկայացուցիչ

ՖԽՔ-ները ևս բացահայտեցին, որ երիտասարդների մոտ առկա է ցածր հետաքրքրվածություն որոշումների կայացման գործընթացներում ներգրավվելու հանդեպ, ինչպես նաև սեփական մասնակցության դերի ցածր գնահատում: Երիտասարդները շեշտադրում են նաև իրենց մտածելակերպի և կարծրատիպերի

դերը, ինչպես նաև սպասումների չարդարացումը, որոնք իրենց խոչընդոտում են ներգրավվել քաղաքացիական գործընթացներում: Հարկ է նշել, որ ՖԽՔ-ների մասնակիցների զգալի մասը տեղյակ չէ, որ իրավունք ունի մասնակցելու ավագանու նիստերին:

«Դե մեր ինչ գործն է, օրինակ, ավագանու նիստերին ինչ գործ ունենք»:

ՖԽՔ մասնակից

«Այդ որոշումներին թեկուզ կանչեն, ես իմ վրա վերցնեմ օրինակը, ինքնաբերաբար, իմ մայրը կասի, որ գնամ ասեմ սենց, սենց, որ ավելի լավ լինի: Բայց չեմ գնա, կոմպլեքսներն են իրականում»:

ՖԽՔ մասնակից

«Երիտասարդը մտածում է՝ իմ կարծիքը կարևոր չէ, ինչ հայտնեմ, կամ իմ գործը չի»:

ՖԽՔ մասնակից

«Ես գիտեմ, որ կարող ենք մասնակցել ավագանու նիստերին, բայց չեմ գնում: Իմ ամուսինը կասի՝ քո ինչ գործն է, որ գնաս, նստես այնտեղ: Պետք լինի՝ ես կգնամ»:

ՖԽՔ մասնակից

«Մի փոքր այստեղ դերի խնդիրն է, ինչ դեր կունենաս դու, արդյոք քո խոսքը կազդի, կհասկանան, ինչ ձևով կընդունեն: Ճիշտ է՝ խոսքի, մտքի իրավունք ունես, բայց ամեն տեղ չէ, որ քո խոսքը կասես»:

ՖԽՔ մասնակից

«Օրինակ, իմ փորձից ելնելով, ես տեղյակ չեմ: Մեր մեջ փոքր ժամանակից մտցրել են, որ քաղաքականությանը չխառնվենք, դա մեր գործը չի, դրանով զբաղվողներ կան, դրա համար էլ ավելի քիչ ենք հետաքրքրվում»:

ՖԽՔ մասնակից

«Այնպես լինի, որ մենք մեր ներգրավվածությամբ ինչ-որ բան կփոխենք ու մտածենք, որ դա կարևորություն ունի, որ մենք ինչ-որ բան կարողացանք անել, այդ դեպքում ավելի շատ կլինի: Իսկ եթե մտածեն՝ ով ինչ ուզում անում է, իրենց ձեռքում լիազորություններ չկան, այդ դեպքում իմաստ էլ չկա որ հետաքրքրվեն կամ ներգրավվեն»:

ՖԽՔ մասնակից

«Մասնակցային բյուջետավորումը, որ տեղի էր ունենում, շատ մարդիկ տեղյակ չէին: Մարդ կար՝ ասում էր՝ ով ինչ ուզի, դա կանի, մենք անիմաստ ենք քվեարկում, թերահավատորեն էին մոտենում»:

ՖԽՔ մասնակից

«Ավելի մեծ տարածքերում այդ ժողովները կազմակերպեն, մարդիկ գան, չխցկվեն իրար մեջ ու հետո հոգնեն դուրս գան: Կամ որ իրենց սպասելիքները չեն արդարանում, հաջորդ անգամ կոտրվում են, էլ ցանկություն չի լինում մասնակցելու»:

ՖԽՔ մասնակից

«Ես մասնակցային բյուջետավորման վերաբերյալ մասնակցել եմ, ու քաղաքացիներից եղել են, որ հարցեր են տվել, իրենք ասել են՝ այս հարցին որոշ ժամանակ անց լուծում կտանք, բայց լուծում չեն տվել մինչև հիմա»։

ՖԽՔ մասնակից

«Ինձ համար շատ հետաքրքիր էր, քանի որ ես հասկանում եմ, թե երբ հարկ ենք վճարում, այդ գումարը որտեղ է գնում»։

ՖԽՔ մասնակից

«Բոլորս էլ հասկանում էինք, բայց կարող էին կարծիք հարցնել, ոչ թե անընդհատ ներկայացնեին։ Թող ներկայացվի, բայց կարծիք հայտնենք, ոչ թե թվերն ասեն, վեր կենան գնան»։

ՖԽՔ մասնակից

«Ավագանու նիստերին մասնակցությունը շատ ցածր է։ Հիմնականում ՀԿ-ները ուղարկում են մասնակիցներին զուտ երիտասարդով ապահովելու համար։ Այնտեղ ընդհանուր շատ ֆորմալ պաշտոնական զրույց է տարվում, երիտասարդները, կարող է, ոչ թե հետաքրքրություն չունենան, այլ հոգնեն ընթացքում, դրա համար էլ մի քիչ պասիվ է մասնակցությունը»։

ՖԽՔ մասնակից

«Ես տեղեկացված չեմ եղել, բայց, եթե տեղեկացված լինեի ու մի փոքր հետաքրքրվեի, հնարավոր է, որ մասնակցեի»։

ՖԽՔ մասնակից

Որակական հետազոտության արդյունքում բացահայտվեցին մի շարք առանցքային պատճառներ, որոնք ընկած են երիտասարդների ցածր քաղաքացիական մասնակցության հիմքում։ Մասնավորապես, թե՛ ՔՀԿ-ների, և թե՛ պետական կառույցների ներկայացուցիչները նշում են ծրագրերին մասնակցության հասանելիության խնդիրը տարբեր բնակավայրերում ապրող երիտասարդների համար՝ պայմանավորված տրանսպորտի խնդիրներով, ինչպես նաև երիտասարդների շրջանում հետաքրքության պակասն իրականացվող ծրագրերի հանդեպ։ Առանցքային պատճառներից են նաև ծրագրերի հասցեական չլինելը, և երիտասարդների ու ծնողների շրջանում առկա գենդերային և այլ կարծրատիպերը։

«Այդ պասիվության պատճառը գյուղի մտածելակերպն էլ է։ Գավառում առաջ նման բան շատ կար, հիմա այդպես չէ։ Իսկ գյուղերում իրենք չեն ուզում մասնակցել, հետաքրքրություն չեն տենում կամ, եթե տենում են, իրենց ծնողները չեն թողնում, որ մասնակցեն, հիմնական կարծես կան ընտանեկան խնդիրներ։ Բացի այդ, օրինակ, Ծաղկաշենից տրանսպորտի համար կարող է չգան-չգնան։ Կամ իրենց կապը թույլ է, շատ մարդիկ չեն իմանում, որ ծրագրեր են արվում, իրենք չեն գա»։

ՏԻՄ ներկայացուցիչ

«Առաջինը չունեն հետաքրքրություն, իրենց հետաքրքրություն շրջանակներում չի տեղավորում այն, ինչ մենք իրականացնում ենք։ Մենք ամեն ինչ անում ենք, որ ՏԻՄ-ի նկատմամբ վստահություն լինի,

մենք բաց ենք, թափանցիկ ենք, պատրաստ ենք լսել երիտասարդներին: Երիտասարդները կարող են ասել և կօգնեն մեզ հասկանալ, թե ինչու իրենք ակտիվ ներգրավված չեն»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Տարբեր մարդկանց մոտ տարբեր է: Օրինակ, մի ժամանակ տղաներն էին միայն մասնակցում, որ նայում էինք վիզուալ, հիմա մենակ աղջիկներն են մասնակցում ծրագրերին: Պետք է հասկանանք ինչն է պատճառը, ինչի համար չեն գալիս: Եթե մեզ մոտ հրավիրում ենք կամավորության, դա էլ չեն ուզում: Մի ժամանակ ասում էին՝ ով կթողնի, որ գան մասնակցեն, բայց հիմա բաց է, իրենք ավելի փակ են: Երիտասարդն է ավելի փակ»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Կարող եմ ասել, որ մեր հանդիպումներին երբեմն լինում է, որ աղջիկները շատ են, քան տղաները, բայց սովորաբար միշտ 50/50 ապահովվում է: Կարող եմ ասել, որ բավականին մեծ հետաքրքրություն կա երկու կողմից էլ: Երևի թե ուսանողներին ավելի հեշտ է գալ ուրիշ համայնք: Երբ գործ ենք ունենում դպրոցի մասնակիցների հետ, միշտ ապահովում ենք, որ կա ծնողի թույլտվություն: Դրա հետ կապված՝ 18-ը լրացածներին շատ ավելի հեշտ է համայնքից համայնք գնալ, մասնակցել բոլոր միջոցառումներին»:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

«18 և բարձր տարիքի մարդիկ արդեն զբաղվում են սեփական կապիտալ կուտակելով, ընտանիքին ֆինանսապես աջակցելով, ու դրանով պայմանավորված քիչ ներգրավվածության ավելի օբյեկտիվ հնարավորություններ ունեն: Իսկ ավելի փոքրերը, 14-17, 18 տարեկանները, ավելի մեծ հնարավորություններ ունեն: Սեռերի հետ կապված, ընդհանրապես Հայաստանում աղջիկներն ավելի են սկսել ակտիվանալ, ավելի են սկսել իրան դրսևորել, հիմա այդ հնարավորությունները գրեթե հավասար են»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Բնակավայրեր կան, որ ընդհանրապես բացակայում են, չեն ուզում մասնակցել, որովհետև սովոր չեն ու չեն էլ հավատում, որ ինչ-որ բան կարող են փոխել: Բնակավայր կան , որ ակտիվ են, երևի գալիս է մտածելակերպից: Գավառից ակտիվ են, քանի որ իրենց հասանելի է, ՀԿ-ների հետ են շատ շփվում, ծրագրերի են մասնակցում, իսկ գյուղական բնակավայրերից շատ չեն մասնակցում: Բայց, օրինակ, Նորատուսը, Կարմիրգյուղը, Գանձակը շատ ակտիվ են»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Հասանելիի հետ կապված միայն մի գլոբալ խնդիր կառանձնացնեմ՝ դա տրանսպորտի խնդիրն է: Եթե տրանսպորտի խնդիրը լուծված է լինում, մնացած ուրիշ ոչ մի խնդիր, կարծում եմ, չունեն: Ծրագրերը հասցեական են այն առումով, որ ես այդպիսի ՀԿ մեզ մոտ չեմ հիշում, որը նախապես չի խոսում շահառուների հետ մինչև իր ծրագիրը անելը: Միայն տեխնիկական հարցեր են՝ տրանսպորտի հետ կապված, ծնողների թույլտվության հետ կապված: Քիչ-քիչ հաղթահարում ենք, որովհետև ծնողները արդեն ճանաչում են իրենց երեխաներին էլ, մեզ էլ»:

ՔՀԿ-ի ներկայացուցիչ

«Հետագայում մենք նպատակ ունենք երիտասարդական կենտրոններ հիմնել նաև բնակավայրերում, որովհետև շատ դեպքերում տեղափոխման ժամային առումով խնդիրներ կան: Միգուցե Գավառի

երիտասարդն էլ նարող է գնալ Հայրավանքում գործող երիտադարդական կենտոն, և տեղափոխությունը կարող է նպաստել զարգացմանը, մտքերի փեխանակմանը»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Բոլորս նայում ենք, որպեսզի մեր դրամաշնորհային հայտերը մրցակցային առավելություն ունենան, փորձում ենք այնպիսի բաներ գրել, որ հաճո են ֆինանսավորող կողմին, բայց երբեմն չեն արտահայտում համայնքի կարիքները: Մենք փորձում ենք թեկուզ մեր շրջականակը հաստատելուց առաջ մեր թիրախային խմբի հետ խոսել, հետազոտություն ենք արել, ծրագրերից մեկում հանրային լսումներ ենք արել բոլոր վարչական շրջաններում: Խնդիրները նույնն են, ու այնպիսի առաջնային խնդիրնեն են, որոնց առկայությունը թույլ չի տալիս մտածել երիտասարդների զարգացման մասին, օրինակ, գյուղում ջուր չկա»:

ՔՀԿ-ի ներկայացուցիչ

«Մենթալիտետի հետ կապված՝ ծնողները, եղբայրները կամ սիրած տղաները: Չեմ տեսել մինչև հիմա, որ սիրած աղջիկները տղաներին ճնշեն, ասեն մի եկեք: Հակառակ դեպքն է եղել, դրա համար եմ դա նշում: Մարդկանց ոչ միայն թերահավատությունն է նպաստում դրան, այլ նաև անտեղյակությունը: Դրա դեմ պայքարելու լավագույն միջոցը ծնողների հետ խոսելն է: Վերջերս մի ծրագիր էինք իրականացնում Վարդենիսի սահմանամերձ համայնքներում: Ես մի աղջկա մամայի հետ մի ժամ խոսել եմ, որ բացատրեմ, թե ով եմ ես, թե ինչ եմ անում, թե մեր ՀԿ-ն ինչ է, ինչ է անում, որտեղ է անում, երբ է անում, որ մարդկանց կարող ենք տրանսպորտով տանել-բերել, որ ամեն ինչ լավ լինի: Ստացվեց, որ ոչ միայն այդ աղջիկը եկավ մասնակցելու,այլ նաև իրա քույրն ու հորեղբոր աղջիկը»:

ՔՀԿ-ի ներկայացուցիչ

«Գավառի երկտասարդը, երբ գալիս է Երևան, տեսնում է ազատ միտքը, նախաձեռնությունը, բայց որ հետ են գնում Գավառ, մի քիչ կաշկանդված են իրենց զգում: Դրա համար շատ մասսայական միջոցառումներ պետք է լինեն Գավառում, դրական ազդեցություն կլինի, մշակութային փոփոխության մասին է խոսքը»:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

Գենդերային կարծրատիպերի և բարդույթների մասին նշում են նաև ՖԽՔ-ներին մասնակցած երիտասարդները: Ընդ որում՝ նշվում են թե՛ իգական, թե՛ արական սեռին վերաբերող կարծրատիպեր: Մասնակիցների մի մասը նշում է, որ իգական սեռի երիտասարդներն ավելի ակտիվ են մասնակցում երիտասարդական ծրագրերին ու միջոցառումներին և ավելի հետաքրքրված են: Սակայն, միևնույն ժամանակ, ծնողների մոտ առկա գենդերային կարծրատիպերը խոչընդոտում են մասնակցությանը: Մյուս կողմից, արական սեռի երիտասարդներն ավելի ազատ են մասնակցության առումով, սակայն նրանց խոչընդոտում են զբաղվածությունը և «կրթված, սովորող տղաների» մասին կարծրատիպերը և զբաղվածությունը: ՖԽՔ-ների մասնակիցներն իրենց ցածր մասնակցության պատճառներն են համարում նաև հետաքրքրության պակասը, զբաղվածությունը, տրանսպորտը և տեղեկացված չլինելը:

«Աղջիկները ավելի ակտիվ են, ձգտում ունեն: Տղաները բանակից հետո ձգտում են գնալ դեպի դուրս, արտագնա աշխատանքի»:

ՖԽՔ մասնակից

«Աղջիկները դպրոցից հետո գնում են ուսման, սովորում են, դրա համար ավելի շատ են մասնակցում»:

ՖԽՔ մասնակից

«Տղաները, որովհետև տղաները ավելի շատ են հետաքրքված ու իրանց արգելող չկա, իսկ աղջիկներին ծնողներն ավելի շատ են արգելում»:

ՖԽՔ մասնակից

«Աշխատատեղերի պակասի պատճառով տեղաները գնում են խոպան, ու սովորելն էլ գնում է վերջին պլան»:

ՖԽՔ մասնակից

«Երիտասարդների չզարգանալու խնդրի մեջ կարծրատիպերն են շատ: Մի նոր, մի լուսավոր բան ես որոշում, որ պիտի անել, կողքից հուշում են, որ դա ամոթ է, աղջիկ ես: Այսինքն, այստեղ սեռն էլ է առաջ գալիս, մի գնա, մի խառնվիր, մարդկանց հետ քիչ տուր-առ, ավելի լավ է դասերիդ ուշադիր լինես: Ոչ ֆորմալ կրթությանը մեր համայնքը, մեր հասարակությունը այդքան էլ տեղ չեն տալիս»:

ՖԽՔ մասնակից

«Գյուղում չի եղել, տրանսպորտի պատճառով երիտասարդները չեն մասնակցել: Ժամանակի խնդիր, գնալ-գալու խնդիր կա, իսկ եթե մեր գյուղում լիներ, բոլորով կմասնակցեին»:

ՖԽՔ մասնակից

«Ինձ համար ամենակարևոր խնդիրը տրանսպորտի խնդիրն է, նամանավանդ առավոտյան ժամերին, երբ մարդիկ գործի են գնում կամ դասի են գնում, ու չի ստացվում նորմալ կանգնել, որովհետև տրանսպորտի դիրքը թույլ չի տալիս, որ նորմալ կանգնեն: Լավ կլիներ, որ ինչ-որ մեծ տրանսպորտային միջոց լիներ, որ ամեն մի գյուղ իր ժողովրդի հետ կարողանար նորմալ տեղաշարժվել»:

ՖԽՔ մասնակից

«Դե կեսն էլ ամաչում են: Կոմպլեքսներ ունեն: Ազատ իրենց կարծիքը չեն կարողանում արտահայտել»:

ՖԽՔ մասնակից

«Մարդը խոսելուց է վախենում ընդանրապես, որվհետև ասում է՝ կարող է մի հատ ծուռ բան ասեմ, ծուռ բառի վրա խնդան, կամ իրենց մեջ մի հատ միտք մտածեն դրա պահով: Հիմնականում դրա պաճառով չեն մասնակցում»:

ՖԽՔ մասնակից

«Իմ կարծիքով, զուտ այն կարծրատիպերը, որ տղաների մեջ կա, միշտ ասում են՝ լավ տղան այս բանը չի անի ու զողական տոնով, իրենց մեջ ապրում են ու մտածում են՝ դա է ճիշտ: Բայց ես շատ տղա ընկերներ ունեմ, ովքեր երիտասարդական կամավորական աշխատանքերին ամեն ինչ անում են, հասնում են: Իրենք ու իրենց մտածելակերպը արդեն ուրիշ են»:

ՖԽՔ մասնակից

«Ժամանակ խնդիրն է, դպրոցը վերջացնում եմ, հետո պարապմունքները, հետո էլ խանութի գործերն են, շաբաթվա կտրվածքով 23 ժամ ունեմ ազատ, չեմ հասցնում»։

ՖԽՔ մասնակից

Հարկ է նշել, որ թե՛ առանցքային տեղեկատուները, և թե՛ ՖԽՔ-ների մասնակիցները նշում են այն մասին, որ բոլոր երիտասարդական ծրագրերին ու միջոցառումներին մասնակցում է երիտասարդների փոքր շրջանակ, իսկ դրանից դուրս գտնվող երիտասարդների ներգրավվածությունը մնում է ցածր։

«Խոչընդոտները հիմնականում ներգրավման հետ կապված։ Շատ երիտասարդներ կան, որ չեն ներգրավվում այս աշխատանքներում։ Մենք միշտ ցածր ենք գնահատում արդյունքը ներգրավման առումով, այսինքն, հիմնականում մասնակցում են նույն մարդիկ։ Այդ տեմպը, որ անընդհատ տարածվում է, անընդհատ նոր մարդիկ են ներգրավվում, շատ ցածր է»։

ՔՀԿ ներկայացուցիչ

«Չնայած ակտիվությունը մեծ է, բայց մեծ է երիտասարդների նույն շրջանակի մեջ, այդ շրջանակից դուրս չեն հետաքրքրվում այս ծրագրերով մի շարք պատճառներից ելնելով։ Կարող է՝ հետաքրքրություն չունեն, բայց, կարծրատիպերից ելնելով, չեն ցանկանում մասնակցել։ Այս խնդրի լուծման հետ կապված մենք ծրագրեր ենք ուզում կազմակերպել, թիմով փորձում ենք պասիվ երիտասարդներին ներգրավել ու այնպիսի դասընթացներ կազմակերպել, որ այդ կարծրատիպային և այլ հարցերը քննարկվեն»։

ՖԽՔ մասնակից

ՔՀԿ-ների ներկայացուցիչները նշում են նաև հասարակական կազմակերպությունների հանդեպ կարծրատիպերի խոչընդոտող դերի մասին։ Նրանք ընդգծում են ՔՀԿ-ների գործունեության թափանցիկության դերը՝ այդ խոչընդոտի հաղթահարման գործում։

«Խոչընդոտների հանդիպում ենք նաև բանբասանքների տեսքով, որը անդրադառնում է կազմակերպության անունի վրա։ Հետսովետական ժամանակներից մարդկանց մոտ տպավորվել է, որ հասարակական կառույցները վատ կառույցներ են։ Ծնողների մոտ կա նաև նման սխալ մտածելակերպ, որը խանգարում է երիտասարդների ներգրավելու հասարակական կազմակերպությունների կողմից առաջարկվող դասընթացներին, նախաձեռնություններին, ծրագրերին»։

ՔՀԿ ներկայացուցիչ

«Ավելի թափանցիկ լինելու արդյունքում է հնարավոր հաջողությունների հասնել։ Մենք հիմնականում փորձում ենք հնարավորին չափ թափանցիկ պահել մեր գործունեությունը, թե հանրային հաշվետվությունների միջոցով ենք փորձում, թե, օրինակ, վիդեոհոլովակների միջոցով։ Երբ երիտասարդները կիսվում են իրենց փորձով, հաջողություններով, դա շրջապատի վրա մեծ ազդեցություն ունենում է, ու լինում են դեպքեր, երբ ծնողներն են արդեն առաջարկում, որ իրենց երիտասարդները նույնպես ներգրավվեն»։

ՔՀԿ ներկայացուցիչ

Ըստ որակական հարցազրույցների մասնակիցների՝ բարձրագույն կրթական հաստատություններում սովորելը մի կողմից, ժամանակ ունենալու առումով խոչընդոտում է քաղաքացիական մասնակցությանը, սակայն, մյուս կողմից տալիս է երիտասարդական ծրագրերում ներգրավվելու մոտիվացիա և բարձր իրազեկվածություն:

«Պատանիները ավելի շատ են, մինչև 18 տարեկան, հետո պակասում են: Կարծում եմ՝ կրթությունն է պատճառը: Այստեղից գնում են Երևան սովորելու, այստեղ մնացողներն էլ պասիվ են, չեն ուզում մասնակցել: Համալսարանի ուսանողները պասիվ են, իսկ քոլեջները շատ ակտիվ են»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Հիմնականում պատճառաբանում են, որ դասերն են խանգարում, պարապում են ավելի շատ, բուհի համար, եթե ընդունվում են , ասում են դասերը չեն հասցնում: Իմ կարծիքով ավելի շատ ոչ թե չեն ուզում, այլ ավելի խորքային պատճառներ կան»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Շնորհակալագրեր, հավաստագրեր, դա էլ է իրենց շահագրգռում, որ գան մասնակցեն: Հիմա դա չկա, չեն գալիս: Եթե կամավորության թուղթ չես տալիս, չեն գալիս: Դրա համար ոգևորված են, բայց այդ ամենն անում են նրա համար, որ տանեն բարձրագույն հաստատություն կրթաթոշակ ստանան: Իրենց մոտիվացիան հավաստագիրն ու շնորհակալագիրն է, ուրիշ մոտիվացիա չունեն»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Այս տարի փորձելու ենք ամփոփել երիտասարդական տարին և տարբեր անվանակարգերում մրցանակներ կան: Սա դարձյալն երիտասարդների խրախուսելու միջոց է: Երիտադարդները, եթե ցանկանում են կրթաթոշակի դիմել մեզ մոտ կամավոր լինելով կամ կազմակերպություններին խնդրելով, որ տան հավաստագրեր, որպեսզի կարողանան օգտվել դրամաշնորներից, դրանք խրախուսող մեթոդներ են»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Իմ կարծիքով հիմնականում ակտիվ մասնակցություն ունենում են ուսանողական տարիներին: Իմ փորձից եմ ասում: Ես իմ ուսանողական տարիներին շատ ակտիվ երիտասարդական կյանք եմ վարել»:

ՖԽՔ մասնակից

Հետաքրքրական է, որ ՖԽՔ մասնակից երիտասարդները մասնակցության խթանման գործում կարևորում են այնպիսի շահագրգռող միջոցների առկայությունը, ինչպիսիք են վկայագրերը և անձնային կամ մասնագիտական աճը: Նրանք նաև նշում են ՏԻՄ-երի և կրթական հաստատությունների կողմից ավելի ակտիվ միջոցառումների ու հանդիպումների կազմակերպման, միջոցառումների ու ծրագրերի թեմատիկ բազմազանության ապահովման, ՏԻՄ-երի աշխատանքներում երիտասարդների ներգրավվման, երիտասարդների հետ ՏԻՄ-երի հաղորդակցման ձևի փոփոխության,

տարբեր համայնքների երիտասարդների միջև փորձի փոխանակման և գյուղական համայնքներում կարծրատիպերի վերացման մասին։

«Բացի այդ, դա էլ առավելություն է տալիս համալսարան ընդունվելուց կամ թեկուզ քոլեջում, որ դու զբաղվում ես այդ գործերով»։

ՖԽՔ մասնակից

«Հա, գնում են, տեսնում են՝ մեկի մոտը վարձը գեղչվել է, ասում են՝ ոնց է գեղչվել, սենց-սենց, կամավորություն եմ արել, թուղթը ներկայացրել եմ, իրենց էլ է հետաքրքրում, ասում են՝ ես էլ մասնակցեմ»։

ՖԽՔ մասնակից

«Ասենք գնացինք այս ինչ բանին նստեցինք, խոսեցինք, բայց հետո դա ինչ-որ հետևանք կունենա՞, օրինակ, կհրավիրե՞ն ինչ-որ մի տեղ աշխատանքի, այդ խմբից թեկուզ մի հոգուն»։

ՖԽՔ մասնակից

«Փոքրիկ շնորհակալագրեր տան թեկուզ»։

ՖԽՔ մասնակից

«Պետք է հիմնականում ոգևորենք, օրինակ, թեմայի վերաբերյալ դրական կողմերը, գաս իմանաս, թե ինչքան դրական կողմեր ունի, որ դու ակտիվ քաղաքացի դառնաս, հիմնականում այդ խնդիրն է»։

ՖԽՔ մասնակից

«Շահը պիտի լինի անձնային պրոգրեսը, եթե դու մտածում ես, որ դա նպաստելու է, որ դու դառնաս ավելի խելացի, մրցունակ ու առաջնորդության հատկանիշներ ձեռք բերես, ամենագերագույնը քո անձնային աճն է»։

ՖԽՔ մասնակից

«Համայնքապետարանը պետք է ուղարկի երիտասարդներին այցեր, հրավերներ։ Նաև բացօթյա միջոցառումներ արվեն, խոսվի այդ թեմաներով, սովորական քաղաքացիներն էլ, ովքեր աշխատում են, տեղյակ չեն կամ սոցցանցերին չեն հետևում, իրենք էլ կտեղեկանան»։

ՖԽՔ մասնակից

«Ընկերական շփվեին երիտասարդների հետ, ոչ թե պաշտոնական, լավ վերաբերմունք ցույց կտայինք»։

ՖԽՔ մասնակից

«Կբացեի էջ, որտեղ կդնեի քննարկումների, սեմինարների, արշավների, բոլոր զարգացնող ծրագրերի մասին նյութերը։ Թեկուզ հետևորդների կարող էինք իմանալ, թե որքան մարդ է հետաքրքրվում այդ ասպարեզում»։

ՖԽՔ մասնակից

«Ես կուզեի, որ հավաքական խումբ լիներ տարբեր գյուղերից, ոչ թե, օրինակ, ով ուզենար մասնակցեր։ Ես կողմ եմ, որ որ ստեղծվեր տարածաշրջաններից հավաքական թիմը, աշխատեր

քաղաքապետարանում խնդիրները բարձրաձայնելու ուղությամբ: Ասենք, ես Գանձակից եմ, ներկայացնեմ Գանձակի պխնդիրները, մեկը Գեղարքունիքից է, ներկայացնի իր խնդիրները»:

ՖԽՔ մասնակից

«Յուրաքանչյուր ուսհաստատությանը կասեի՝ մի ծրագիր մշակեք ինչ-որ միջոցառում համայնքում կազմակերպելու համար, հստակ օր կնշանակեի ու տվյալ հաստատությունը իր միջոցառումով կներկայանար»:

ՖԽՔ մասնակից

«Ես մտածում եմ, որ ամեն համայնքից երիտասարդ դեսպաններ լինեն, ովքեր առանձին իրենց ժողովներիը կանեին, համայնքը երիտասարդակենտրոն դարձնեինք, որ երիտասարդներն էլ իրենց շատ կարևորությունը զգային»:

ՖԽՔ մասնակից

«Դպրոցում սեմինարներ կանցկացնեի, երեխաների մոտ հետաքրքրություն կառաջացնեի, կպատմեի, թե ինչ է երիտասարդական կամավորությունը, կպատմեի երիտասարդական ծրագրերի մասին, երեխաների մոտ իրազեկվածությունը կսկսեի բարձրացնել, հետաքրքրություն էլ կառաջանար»:

ՖԽՔ մասնակից

«Երիտասարդների փոխանակություն տեղի ունենա, այսինքն զարգացած երիտասարդներին տրվի հնարավորություն ապրելու այստեղ, ու իրենք մնան բնակելի տեղում որոշակի ժամանակ: Քանի որ իրենք ակտիվ են ու զարգացած, իրենց հայացքները ուրիշ են: Իրենք չեն նայում, թե ոնց է կողքինը նայում, նշանակություն չեն տալիս: Կամ մենք գնանք»:

ՖԽՔ մասնակից

«Երիտասարդների հետ քննարկումները, սեմինարները շատացնեինք, երիտասարդների տեղեկացնեինք, թե ինչ հարցեր կան: Ոչ թե որոշումը կայացնեինք, նոր լսեինք, այլ մի երիտասարդի կարծիքը ընդունելով ու որոշում կայացնելով հրահրեինք նրան, որ իրենք էլ ակտիվ մասնակցեին և լուծումներ մտածեին: Այսինքն, եթե մի օրինակ լիներ, որ իրենց խոսքը կարևոր է, մյուսների համար դա հիմք կհանդիսանար, որ ներգրավվեին ու մասնակցեին:

ՖԽՔ մասնակից

«Ծրագրերը ավելի բազմազան դարձնենք, որ յուրաքանչյուրը իր նախասիրությունների հիման վրա մասնակցի այդ ծրագրերին»:

ՖԽՔ մասնակից

«Մի փոքր պետք է գյուղի կարծրատիպերը փոխել: Չնայած, եթե շատ մասնակցողներ լինեն, միգուցե փոխվի»:

ՖԽՔ մասնակից

«Ամենաարագ ու արդյունավետ միջոցը մեր տարածաշրջանում մտածելակերպը փոխելու համար, այլ մարզերի համայնքների հետ միջհամայնքային, մեծամասշտաբ ծրագրերի կազմակերպումն է: Երբ դրսից մարդիկ են գալիս, այստեղ ավելի շատ լրջանում են, որ տպավորություն գործեն, կամ տեսնում

են, որ այդտեղ ուրիշ ձևով են ապրում, դա էլ է նորմալ: Համայնքային ու մեծամասշտաբ միջոցառումներ եթե շատ անեն, ավելի լավ կլինի»:

ՖԽՔ մասնակից

Հատկանշական է, որ ՖԽՔ-ների մասնակից երիտասարդները նշում են ծրագրերի ու միջոցառումների պարտադիր բնույթ ունենալու կարևորության մասին, որը կխթանի իրենց մասնակցությունը:

«Դպրոցում պետք է հատկացվի ժամ, որ երեխաները պատադրված մասնակցեն այդ խմբակներին, թե չէ, որ թողում են իրանց ցանկությանը, իրենք ոչ մի բան չեն ցանկանում անել»:

ՖԽՔ մասնակից

«Վարչական ղեկավարը գյուղի բոլորի երիտասարդներին պետք է պարտադրի, որ գան համայնքապետարան, նստեն, քննարկեն, ինչ գաղափարներ կառաջարկեն, մանավանդ երիտասարդներն ավելի լավ գաղափարներ են առաջարկում»:

ՖԽՔ մասնակից

«Պարտադրելը ճիշտ է: Օրինակ, կարող է պարտադիր լինել սկզբի հատվածը, պարտադրեն մի հանդիպմանը մասնակցել, կարծիքներ հայտնել, դրանից հետո իրենք որոշեն՝ կուզեն, թե չէ»:

ՖԽՔ մասնակից

«Մեր սերունդի մեջ մի քիչ կա խնդիրը, որ մենք հիմնովի չենք ներգրավվում: Ինձ թվում է, եթե աստիճանաբար նման կազմակերպությունները շատ լինեն, երիտասարդներին տեղեկացնեն, որ կան նման կազմակերպություններ, որ կարելի է ներգրավվել, մենք աստիճանաբար այդ շեմը կհաղթահարենք, ու բոլորը կփորձեն մասնակցել ու տեղեկացված լինել, ինչու չէ, նաև որոշ հարցեր կփորձեն լուծել»:

ՖԽՔ մասնակից

ՏԻՄ ներկայացուցիչներն ընդգծում են համայնքապետարանի, ՔՀԿ-ների և այլ կառույցների միջև ակտիվ համագործակցության կարևորությանը՝ երիտասարդների քաղաքացիական մասնակցության բարելավման առումով: Միևնույն ժամանակ, կարևորվում է կրթական հաստատությունների դերը՝ որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության և իրազեկվածության բարելավման առումով: Հարկ է նշել, որ ՔՀԿ ներկայացուցիչներն ընդծում են ՏԻՄ-երի հետ համագործակցության շրջանակում իրենց անկախության պահպանումը, ինչպես նաև համայնքային ենթակառուցվածքների զարգացումը և երիտասարդների կարիքների բացահայտման նպատակով հետազոտությունների իրականացումը: Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներն ընդգծում են ծրագրերի վերաբերյալ հետադարձ կապի ապահովման ու փորձի փոխանակման դերը:

«Կարելի է հիմնվել դպրոցների վրա: Դպրոցները շատ մեծ ներուժ են, պատրաստում են մարդիկ, որ վաղը իրանց ձեռքն են վերցնելու կառավարումը: Եթե դպրոցի տնօրինության հետ կարողանում ես շատ լավ համագործակցել, տնօրինությունը բաց է լինում: Մեզ մոտ շատ դպրոցներ բաց են լրիվ

համագործակցության համար: Իմ եղբայրը դպրոցի աշակերտներից է տեղեկանում, տնօրինությանն է հարցնում, դա շատ լավ մեխանիզմ է, որը մասամբ գործում է»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Պետք է իրար հետ կապ ունենան բոլոր կազմակերպությունները՝ ՔՀԿ-ներ, պետական, իրար լրացնելով, իրար հետ հաղորդակցվեն, ծրագրեր մշակեն ու անեն, որ ի նպաստ երիտասարդների զարգացման լինի: Մենք հիմա այդ ձևով ենք փորձում աշխատել, քանի որ կան կազմակերպություններ, որ անում են այն, ինչ մենք պետք է անենք տարբեր ժամանակահատվածում: Օրինակ, համայնքապետարանի դեպքում կարիքների գնահատումն արվում է տարվա վերջում, կան կազմակերպություններ, որ տարվա սկզբին կամ այլ ժամանակահատվածում են անում, իսկ երբ մեզ ներկայացնում են, պետք չի գալիս: Շատ կուզեինք, որ տվյալ կազմակերպությունները մեզ հետ համագործակցեն, քանի որ կան ծրագրեր, որոնց մենք չենք կարող դիմել, պետք է ՔՀԿ լինի: Մեզ մոտ լավ ստացվում է համաֆինանսավորել: Կարող ենք միասին ավելի լավ բաներ անել»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Շատ կարևոր է տեղեկացնել արդյունքների մասին, հաջողությունների մասին, որ իրենք տեսնեն, որ իրենց գործը արդյունք է ունեցել: Նաև շատ կարևոր է, որ բոլոր համայնքների հետ հանդիպումներ ունենան և փորձի փոխանակում իրականացվի: Կարելի է նաև ունենալ երիտասարդական ակումբներ, կենտրոններ, որոնք իրենք էլ կփորձեն իրենց համայնքներում երիտասարդներին ակտիվացնել և ներգրավվել քաղաքականության մշակման և քաղաքաքացիական հասարակության գործունեության մեջ»:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

«Համար մեկ խոչընդոտը ենթակառուցվածքներն են, որովհետև նույնիսկ եթե կարիք է լինում դրսից հյուրեր ունենալ կամ կազմակերպություններ հրավիրել, մեծաքանակ միջոցառումներ անել, պետք է գնանք երևի հարսանյաց սրահներում անենք: ՏԻՄ-ի հետ մենք փորձում ենք մեր անկախությունը պահել ու չդառնալ այն կազմակերպություններից, որոնց ցանկացած պահի կարող են զանգել, ասել, որ պետք է ինչ-որ բան անեն»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Պետք է երիտասարդների ձայնը լսելի դարձնել և լսել երիտասարդությանն առհասարակ, որովհետև եթե մենք ստեղ տեղում որոշում կայացնենք, որը չի բխի իրենց կարիքներից, խնդիրներից, անհրաժեշտությունից, պատասխան ազդակ չի լինի: Կա լուծման տարբերակ, իրենք պետք է կրողն ու անմիջական մասնակիցը լինեն, որպեսզի լինեն ավելի մոտիվացված և ավելի շահագրգռված»:

ՏԻՄ ներկայացուցիչ

«Մեր համայնքային իշխանությունները շատ դեպքերում ասում են՝ բաց ենք երիտասարդների ներգրավվածության համար, բայց երբ ներգրավվածությունը հասնում է մի մակարդակի, որտեղ երիտադարդները պետք է բաց մնան, ասում են՝ դուք որոշեք: Շատ դեպքերում երիտասարդները չեն վստահում: Մյուս խոչընդոտն այն է, որ խոսում ենք իրենց ծրագրերի մասին, բայց երբ գալիս է կատարելու ժամանակը, մոռանում ենք: Դա երիտասարդների մոտիվավիան գցում է»:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

«Կան 3 տեսակի մարդիկ՝ ովքեր կողմնորոշված են, որ ամեն կերպ իրենց ազդեցությունն ու ներդրումն ունենան համայնքում, մարդիկ, ովքեր ոչ մի կերպ չի ներգրավվելու, և մարդիկ, ովքեր դեռ չեն կողմնորոշվել: Մեր թիրախը առաջին հերթին մարդիկ են, որ դեռ չեն կողմնորոշվել: Հիմա էլ դպրոցներում շրջում եմ, որ աչքերը վառվում է՝ իրենց մոտ մեծ ցանկություն է ինչ-որ բան անելու, բայց 1-ին մենթալետետային խնդիրների պատճառով, 2-րդ կենտրոնից՝ Գավառ քաղաքից հեռու լինելու պատաճառով, 3-րդ իրենց ուժերին վստահ չլինելու պատճառով: Իրենք չեն իրացվում, և դրանով իրենց պոտենցիալը չի ծառայում համայնքի զագացմանը»:

ՔՀԿ ներկայացուցիչ

Հատկանշական է, որ ՖԽՔ-ների մասնակից երիտասարդների կողմից նշվել են դեպքեր, երբ իրենք փորձել են որևէ խնդրի լուծման նպատակով իրականացնել քայլեր և համագործակցել ՏԻՄ-երի հետ, սակայն արձագանք չեն ստացել:

«Մենք նույնիսկ քոլեջով ենք ծրագրեր իրականացրել, դիմել ենք համայնքապետարան և ասել ենք, որ մենք էլ ենք պատրաստ մեր աջակցությունը ցուցաբերել, բայց պատասխան չենք ստացել»:

ՖԽՔ մասնակից

«Մենք դասարանով պլակատներ էինք պատրաստել բանկոմատների բացակայության համար: Բերեցինք գյուղապետարան ներկայացրեցինք, որ խնդիր կա, բայց օգուտ չեղավ, դրան չանդրադարձան, մենք էլ դրանից էլ ցանկություն չունեցանք այլ բան անելու: Արդեն հիասթափվում ես քո արած աշխատանքից, որ ոչ մի բանի տեղ չեն դնում»:

ՖԽՔ մասնակից

Ինչ վերաբերում է համայնքային կյանքում երիտասարդների ունեցած դերին, առանցքային տեղեկատուների գնահատմամբ՝ այն ունի նախաձեռնությունների իրականացման, կազմակերպման, հանրայնացման, ինքնության ամրապնդման և երկրի ճանաչողության բարձրացման դեր: Շեշտադրվում է նաև Գավառ համայնքում երիտասարդների՝ ՏԻՄ գործունեությանը նպաստող դերը և ավագանիում ու այլ կառույցներում ներգրավվածությունը: Միևնույն ժամանակ, երիտասարդների դերի բարձրացման առումով ընդգծվում է ռազմավարական մոտեցման, ՏԻՄ-երի և ՔՀԿ-ների միջև համագործակցության խթանման, ինչպես նաև համայնքներում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

«Որ մի երիտասարդի հետ խոսում ես, խորապես խնդիրները բացահայտելուց պարզ է դառնում, որ բոլոր խնդիրները տանում են տնտեսական կամ սոցիալական արմատների: Մարդկանց պետք է աջակցել տնտեսական հզորացման և սոցիալական ինտեգրացիայի համար, որ իրենք հարմարվեն իրենց միջավայրին, կարողանան միջավայրը հարմարեցնել իրենց ու այստեղ աշխատեն ու մնան»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Պետք է բնականաբար սերտ լինի աշխատանքը հասարակական կառույցների հետ, որոնք միշտ շարժիչ օղակ են եղել երիտասարդների զարգացման ու ներգրավվածության տեսանկյունից, քանի որ երիտասարդները կամ հասարակական կառույցների արած աշխատանքների արդյունքում են

ակտիվանում, կամ իրենց այլ երիտասարդներ են միանում: Այսինքն, շատ կարևոր է հասարակական կառույցների դերը կամ որպես միջնորդ կամ նախաձեռնող կողմ»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Մեր ավագանում կազմում կան մարդիկ ովքեր, որ մինչև երեսունհինգ տարեկան են, ավագանիում կան նաև ներգրավված երիտասարդներ: Բայց, մյուս կոպոնենտը դրա բովանդակային կողմն է. արդյոք երբ ավագանիում քննարկվում են երիտասարդներին վերաբերող հարցեր, փորձում են հաշվի առնել, թե նույն խնդրի մասով երիտասարդները ինչ լուծում են պատկերացնում: Բոլոր համայնքներում պետական մակարդակով կա ներկայացուցչություն, նրանք որոշակի դեր ունեն, բայց եթե գանք բովանդակային կողմին, իմ խորին համոզմունքն է, որ այստեղ դեռ շատ ենք կաղում»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Պետք է ռազմավարություն ունենանք, ուր ենք ուզում տանել, ավելի շատ միջոցառումներ նվիրված լինեն երիտասարդներին, իրենց հետաքրքրության շրջանակներում ամեն ինչ արվի, որպեսզի իրենք էլ ներգրավվեն»:

ՏԻՄ ներկայացուցիչ

Հետաքրքրական է, որ երիտասարդներն իրենց դերը համայնքում համարում են որպես գաղափար տվողի և իրագործողի, նախաձեռնողի, շարժիչ ուժի, համայնքի կյանքին ռիթմ տվողի, կազմակերպչի, իրազեկողի, կրթողի, ավելի շատ տեղեկատվության տիրապետողի, խնդիրներ բարձրաձայնողի և վերհանողի: Նրանց գնահատմամբ՝ իրենց համայնքներում երիտասարդների փոքր մասն իրականում ունի այդ դերը: ՖԽՔ-ների մասնակիցները կարևորում են ծրագրերին մասնակցությունը, կրթությունը, ինչպես նաև երիտասարդների շրջանում հետաքրքրության ապահովումը՝ իրենց դերի բարձրացման առումով:

«Երիտասարդը կարողանում է նոր, ժամանակակից մտքեր առաջացնել, արտահայտել և կարող է շատ ավելի հետքրքրություն մտցնել այս գյուղում, քան մեծերը»:

ՖԽՔ մասնակից

«Եթե համայնքը ընդունենք որպես գործարան, երիտասարդները պետք է լինեն արտադրանքի ղեկավարողները, մատակարարող աղբյուրներ»:

ՖԽՔ մասնակից

«Ներկայիս երիտասարդները ծանոթ են ամբողջ աշխարհին կյանքին, ապրելակերպին, խնդիրներին, իրենց մտահորիզոնը ավելի մեծ է: Մեզնից մեծերն, օրինակ, գիտեն Հայաստանի կամ Խորհրդային Միության երկրների մասին, իսկ մենք գիտենք ամբողջ աշխարհի քաղաքակրթությունը, քաղաքականությունը, ուրիշ երկրներում եղած խնդիրների լուծումները կարող ենք օգտագործել մեր երկրում: Երիտասարդները նոր են, թարմ են, իրենք կարող են իրենց բոլոր հնարավորություններն ու ուժը ներդնել իրենց համայնքի բարելավման համար»:

ՖԽՔ մասնակից

«Երիտասարդներ են ընտրում՝ իրենց դերը բարձր լինի, թե չէ: Օրինակ, դպրոցում ամառվա ընթացքում 11-12-րդ դասարանի երեխաները երիտասարդ են համարվում, առաջարկեցի ֆրանսերենի դասընթացներ, ոչ մեկ ցանկություն չհայտնեց, ընդ որում, անվճար էր և օնլայն: Իրենց ցանկությունն է՝ մասնակցեն, թե չմասնակցեն, իրենց դերը կարևոր լինի, թե չլինի, իրենք փոփոխություն կարող են անել, թե չէ»:

ՖԽՔ մասնակից

«Մարդիկ ունեն սահմանափակ մտածելակերպ, մտածում են՝ տուն ունենք, կովն ունենք, կգնանք տուն, կաթ ու մածուն կուտենք, կարտոֆիլը ցանեցին իրենց տան դիմացը, պրծավ գնաց, էլ ինչ են ուզում»:

ՖԽՔ մասնակից

«Օրինակ, մտքեր շատ ունեն, ես էլ այդպիսի մտքեր շատ ունեմ, բայց երբ արդեն ֆինանսավորման հարցն է գալիս, հետ ես քաշվում»:

ՖԽՔ մասնակից

«Կարանք իրենց ասածներին ապագա տանք, աստիճանաբար առաջ տանենք, ինչ-որ խմբակ ստեղծենք: Ես ճանաչում եմ երիտասարդի, իմ տարիքի տղա է, փոքր ժամանակ դհոլ է պարապել, եկել է մեր դպրոցում խմբակ է բացել, երեխեքն էլ շատ սիրով գնում էին»:

ՖԽՔ մասնակից

«Օրինակ, մեր երիտասարդներից, ով սովորում է ԳՊՀ-ում, եկել էին և Սևանա լճի աղտոտվածության ընդհանուր պատճառներն էին մեզ ասում, թե ինչ պետքա անենք, որ չաղտոտենք, մաքուր պահենք: Երտասարդների ոչ շատ մեծ մասը ունի այդ դերը»:

ՖԽՔ մասնակից

«Պետք է ամեն ինչը սկսվի շատ փոքք ժամանվանից, հենց մանակապարտեզից, ոչ այնպես, ոնց հիմա մենք պատկերացնում ենք, այլ միգուցե ավելի փոքր ծրագրեր, հատուկ փոքրերի համար, որ արդեն սովոր լինեն»:

ՖԽՔ մասնակից

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանակական հետազոտության շրջանակում իրականացվել է նաև երիտասարդների՝ քաղաքացիական մասնակցության համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների գնահատում:

Հարցմանը մասնակցած երիտասարդները հիմնականում վստահում են համայնքապետարանին, իրենց համայնքում գործող ՔՀԿ-ներին և միջազգային կազմակերպություններին: Այդուհանդերձ, ամենաշատ վստահությունն ունի

համայնքապետարանը, որին լիովին վստահում է հարցվողների 32%-ը։ ՔՀԿ-ները (19%) և միջազգային կազմակերպությունները (16%) ունեն ավելի ցածր վստահության մակարդակ։

Գծապատկեր 25. Որքանո՞վ եք վստահում հետևյալ կառույցներից յուրաքանչյուրին (միջազգային կազմակերպություններ՝ n=343; ՔՀԿ-ներ՝ n=344; համայնքապետարան՝ n=365)



Ինչ վերաբերում է տարբեր կառույցների աշխատանքին՝ ուղղված Գավառ համայնքում երիտասարդների կյանքի բարելավմանը, այստեղ ևս երիտասարդները համեմատաբար դրական են վերաբերվում համայնքապետարանի և բացասական՝ միջազգային կազմակերպությունների աշխատանքին։ Հարցվողների 20%-ը գերազանց է գնահատել համայնքապետարանի, և 9%-ը գերազանց է գնահատել միջազգային կազմակերպությունների աշխատանքը։ Ընդհանուր առմամբ, բոլոր կառույցների աշխատանքը հիմնականում գնահատվել է լավ կամ բավարար։

Գծապատկեր 26. Ինչպե՞ս կգնահատեք հետևյալ կառույցների աշխատանքը՝ Գավառ համայնքում երիտասարդների կյանքի բարելավման ուղղությամբ (միջազգային կազմակերպություններ՝ n=340; ՔՀԿ-ներ՝ n=345; մարզպետարան՝ n=363; համայնքապետարան՝ n=369)



Ըստ հարցմանը մասնակցած երիտասարդների՝ իրենց համայնքում այս պահին ամենակարևոր խնդիրներն են գործազրկությունը (63%), արտագաղթը (17%) և կրթությունը (9%)։ Հետաքրքրական է, որ հարցվողների 48%-ն է իրեն լիովին իրազեկված համարում այդ խնդրից, իսկ 51%-ը՝ մասամբ իրազեկված։ Միևնույն ժամանակ, երիտասարդների 34%-ն իրեն լիովին կարողունակ է համարում այդ խնդրի լուծման հարցում, իսկ 36%-ն իր կարողունակությունը գնահատում է 4 (5 բալանոց համակարգով, որտեղ 5-ը նշանակում է լիովին կարողունակ)։

Գծապատկեր 27. Ըստ Ձեզ, ո՞րն է Ձեր համայնքում ամենակարևոր խնդիրն այս պահին (n=365)



Գծապատկեր 28. Որքանո՞վ եք Դուք Ձեզ իրազեկված համարում այդ խնդրի մասին (n=368)



Գծապատկեր 29. Ըստ Ձեզ՝ որքանո՞վ եք Դուք կամ Ձեզ նման երիտասարդները կարողունակ (ունեն անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ) մասնակցելու հանրային քաղաքականության մշակմանը (n=369)



Հարցմանը մասնակցած երիտասարդները նաև գնահատել են իրենց սեփական գիտելիքներն ու հմտությունները՝ կապված քաղաքացիական մասնակցությանն առնչվող տարբեր գործողությունների հետ: Նրանք իրենց ամենաշատը գիտակ են համարում քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (81%-ն իրեն համարում է որոշ չափով գիտակ) և տեղական մակարդակում հանրային քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացները հասկանալու հարցերում (79%-ն իրեն համարում է որոշ չափով գիտակ): Երիտասարդներն ամենաքիչն իրենց գիտակ են համարում քաղաքացիական ներգրավվածության միջոցառումներ կազմակերպելու և ղեկավարելու (38%-ն իրեն համարում է բոլորովին ոչ գիտակ) և այլ մարդկանց հետ համայնքային նախագծերի կամ քաղաքացիական գործունեության շուրջ համագործակցելու հարցերում (33%-ն իրեն համարում է բոլորովին ոչ գիտակ): Տրամաբանական է, որ երիտասարդներն քաղաքացիական մասնակցության առումով ամենաշատը կցանկանային բարելավել թիմային աշխատանքի (31%), բանակցությունների (14%) և հաղորդակցության (14%) հմտությունները:

Գծապատկեր 30. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր սեփական գիտելիքներն ու հմտությունները հետևյալներից յուրաքանչյուրում (Հասկանալ տեղական մակարդակում հանրային քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացները՝ n=367; Արդյունավետ կերպով հայտնել կարծիք քաղաքացիական հարցերի վերաբերյալ՝ n=367; Ուսումնասիրել և վերլուծել սոցիալական և քաղաքական խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն՝ n=368; Համագործակցել այլ մարդկանց հետ համայնքային նախագծերի կամ քաղաքացիական գործունեության շուրջ՝ n=368; Կազմակերպել և ղեկավարել քաղաքացիական ներգրավվածության միջոցառումներ՝ n=363)



Աղյուսակ 17. Ո՞ր հմտություններն է Ձեզ անհրաժեշտ բարելավել՝ Ձեր համայնքային կյանքում ավելի ակտիվ ներգրավվելու համար[3]

Հմտություններ	N	Տոկոս	Տոկոսն հարցվողների ընդհանուր թվի մեջ
Թիմային աշխատանք	227	31%	62%
Բանակցություններ	101	14%	27%
Հաղորդակցություն	101	14%	27%
Առաջնորդություն	88	12%	24%
Ստեղծարարություն	76	10%	21%
Թվային գործիքներ և թվային գրագիտություն	65	9%	18%
Քննադատական մտածողություն և խնդիրների լուծում	59	8%	16%
Ջատագովություն	25	3%	7%
Ընդհանուր	**742**	**100%**	**201%**

Հարցմանը մասնակցած երիտասարդները նաև նշել են այն միջոցները ու պայմանները, որոնք իրենց թույլ կտան բարելավել քաղաքացիական մասնակցությանն առնչվող գիտելիքներն ու հմտությունները: Ամենահաճախը նշված

[3] Հարցվողները հնարավորություն են ունեցել նշելու բոլոր հնարավոր տարբերակները

միջոցն է դասընթացներին մասնակցությունը (35%), որին հետևում են հաճախակի շփումները քաղաքացիական մասնակցությամբ հետաքրքրված այլ երիտասարդների (22%) և ՏԻՄ ներկայացուցիչների (22%) հետ:

Աղյուսակ 18. Ի՞նչը կօգնի Ձեզ և Ձեզ նման երիտասարդներին բարելավել քաղաքացիական մասնակցությանն առնչվող գիտելիքներն ու հմտությունները[4]

Հմտություններ	N	Տոկոս	Տոկոսն հարցվողների ընդհանուր թվի մեջ
Դասընթացների մասնակցություն	234	35%	63%
Գրքերի և առցանց ռեսուրսների հասանելիություն	76	11%	21%
Մենթորություն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից	66	10%	18%
Հաճախակի շփումներ ՏԻՄ ներկայացուցիչների հետ	138	21%	37%
Հաճախակի շփումներ քաղաքացիական մասնակցությամբ հետաքրքրված այլ երիտասարդների հետ	149	22%	40%
Ընդհանուր	**663**	**100%**	**180%**

Քանակական հարցման շրջանակում չափվել են նաև երիտասարդների՝ իրենց համայնքը լքելու վերաբերյալ դիրքորոշումները, ինչպես նաև այլ մարդկանց հանդեպ վստահության ընդհանուր մակարդակը: Հարցվողների մեծամասնությունն ուրախ է, որ ապրում է իր համայնքում (74%-ը լիովին համաձայն է այս դատողության հետ), և կեսից ավելին չէր ցանկանա տեղափոխվել այլ համայնք (65%-ը բոլորովին համաձայն չէ այս դատողության հետ) կամ այլ երկիր (57%-ը բոլորովին համաձայն չէ այս դատողության հետ): Հատկանշական է, որ 27-30 տարեկանների ավելի մեծ տոկոս (47%) չի համաձայնվել դատողության հետ՝ համեմատած 18-22 և 23-26 տարեկանների հետ (36% և 61% համապատասխանաբար) (Chi-Sqaure=19.849, p=0.011): Ինչ վերաբերերում է վստահությանը, ապա այստեղ երրիտասարդների մոտ առկա է այլ մարդկանց հանդեպ խորը անվստահություն: Հարցվողների 94%-ը համաձայն է այն դատողության հետ, ըստ որի՝ «Մարդկանց հետ գործ ունենալիս անհրաժեշտ է շատ զգույշ լինել», և միայն 6%-ն է համաձայնել, որ «Մարդկանց մեծ մասին կարելի է վստահել»:

[4] Հարցվողները հնարավորություն են ունեցել նշելու բոլոր հնարավոր տարբերակները

Գծապատկեր 31. 1-ից 5-բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է «Ընդհանրապես համաձայն չեմ», իսկ 5-ը՝ «Լիովին համաձայն եմ», խնդրում եմ պատասխանել, թե արդյոք համաձայն եք հետևյալ պնդումների հետ (n=369)



Գծապատկեր 32. 1-ից 5-բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է «Ընդհանրապես համաձայն չեմ», իսկ 5-ը՝ «Լիովին համաձայն եմ», խնդրում եմ պատասխանել, թե արդյոք համաձայն եք հետևյալ պնդումների հետ (n=369)



Գծապատկեր 33. 1-ից 5-բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է «Ընդհանրապես համաձայն չեմ», իսկ 5-ը՝ «Լիովին համաձայն եմ», խնդրում եմ պատասխանել, թե արդյոք համաձայն եք հետևյալ պնդումների հետ (n=369)

Գծապատկեր 34. Հետևյալ դատողություններից ո՞րի հետ եք ավելի շատ համաձայն (n=368)



Կարողությունների և հմտությունների առումով ևս բացահայտվել են մի շարք առանձնահատկություններ տարբեր սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ ունեցող երիտասարդների շրջանում: Գյուղաբնակների ավելի մեծ տոկոս է (38%) լիովին վստահում Գավառի համայնքապետարանին, քան քաղաքաբնական երիտասարդների (24%):

Աղյուսակ 19. Գավառի համայնքապետարանի հանդեպ վստահությունը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Լիովին վստահողների %	Նշանակալիության թեստ
Վստահություն_Գավառի համայնքապետարան	**116**	**32%**	**n/a**
Բնակավայր			
Քաղաքային	40	24%	Mann-Whitney test, p=0.026
Գյուղական	76	38%	

27-30 տարեկանների շրջանում ավելի բարձր է երիտասարդների տոկոսը, որոնք գերազանց են գնահատել մարզպետարանի աշխատանքը՝ Գավառ համայնքի երիտասարդների կյանքի բարելավման ուղղությամբ, քան 18-22 և 23-26 տարիքային խմբերի մոտ:

Աղյուսակ 20. Մարզպետարանի աշխատանքի՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Գերազանց գնահատողների%	Նշանակալիության թեստ
Մարզպետարանի աշխատանք	**59**	**16%**	**n/a**
Տարիք			
18-22	28	17%	Chi-square test, Chi-square=14.644, p=0.023
23-26	10	11%	

27-30	21	20%	

Երիտասարդները տարբերվում են նաև համայնքի կարևորագույն խնդրի մասին իրենց դիրքորոշումներում: 18-22 տարեկաններն ավելի շատ են կարևորում կրթությունը (16%), քան 23-26 (6%) և 27-30 (9%) տարեկանները: Միևնույն ժամանակ, 23-26 տարեկաններն ավելի շատ են կարևորում գործազրկությունը (72%), քան 18-22 (56%) և 27-30 տարեկանները (56%):

Աղյուսակ 21. Համայնքում ամենակարևոր խնդիրը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Խնդիրը նշածների %	Նշանակալիության թեստ
Ամենակարևոր խնդիրը համայնքում_Գործազրկություն	**233**	**64%**	**n/a**
Տարիք			
18-22	97	56%	Chi-square test, Chi-square=25.550, p=0.004
23-26	63	72%	
27-30	97	56%	

Ինչ վերաբերում է խնդրի մասին իրազեկվածությանը, գյուղում բնակվող երիտասարներն ավելի շատ են իրենց լիովին իրազեկված համարում ամենակարևոր խնդրի մասին (54%), քան քաղաքում բնակվողները (40%): Միևնույն ժամանակ, արական սեռի երիտասարդներն ավելի շատ են իրենց իրազեկված համարում (57%), քան իգական սեռի երիտասարդները (44%):

Աղյուսակ 22. Ամենակարևոր խնդրի մասին իրազեկվածությունը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Լիովին իրազեկվածների %	Նշանակալիության թեստ
Իրազեկվածություն խնդրի մասին	**175**	**48%**	**n/a**
Բնակավայր			
Քաղաքային	66	40%	Chi-square test, Chi-square=13.432, p=0.001
Գյուղական	109	54%	
Սեռ			
Արական	52	57%	Chi-square test, Chi-square=7.410, p=0.025
Իգական	123	44%	

Միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների ավելի մեծ տոկոս է (21%) համարում, որ բոլորովին ոչ գիտակ է տեղական մակարդակում հանրային քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացները հասկանալու առումով, քան միջին մասնագիտական (16%) և բարձրագույն կրթություն (5%) ունեցողները: Նույն միտումն առկա է նաև սոցիալական և քաղաքական խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն վերլուծելու և քաղաքացիական

ներգրավվածության միջոցառումներ կազմակերպելու և ղեկավարելու կարողության հարցերում:

Աղյուսակ 23. Սեփական հմտությունների գնահատումը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Բոլորովին ոչ գիտակների %	Նշանակալիության թեստ
Գործընթացները հասկանալու կարողություն	**60**	**16%**	**n/a**
Կրթության մակարդակ			
Միջնակարգ	48	21%	Kruskal-Wallis's test, p = 0.002
Միջին մասնագիտական	7	16%	
Բարձրագույն	5	5%	
Ուսումնասիրելու և վերլուծելու կարողություն	**95**	**26%**	**n/a**
Կրթության մակարդակ			
Միջնակարգ	73	33%	Kruskal-Wallis's test, p = 0.001
Միջին մասնագիտական	11	26%	
Բարձրագույն	11	10%	
Միջոցառումներ կազմակերպելու և ղեկավարելու կարողություն	**95**	**26%**	**n/a**
Կրթության մակարդակ			
Միջնակարգ	100	45%	Kruskal-Wallis's test, p = 0.004
Միջին մասնագիտական	15	35%	
Բարձրագույն	24	25%	

Տարբերություններ են արձանագրվել նաև զբաղվածության և սեփական կարողությունների գնահատման առումով: Քաղաքացիական հարցերի վերաբերյալ արդյունավետ կերպով կարծիք հայտնելու առումով իրենց բոլորովին ոչ գիտակ ամենաշատը համարում են տնային տնտեսուհիները (29%) և մասնավոր ընկերություններում աշխատողները (26%), և ամենաքիչը՝ պետական կառույցների աշխատակիցները (7%) և ուսանողները (14%): Համայնքային նախագծերի և քաղաքացիական գործունեության շուրջ այլ մարդկանց հետ համագործակցելու հարցում ամենաշատն իրենց ոչ գիտակ են համարում մասնավոր ընկերություններում աշխատողներն (44%) ու տնային տնտեսուհիները (42%), և ամենաքիչը՝ պետական կառույցների աշխատակիցները (19%) և ուսանողները (21%): Իսկ քաղաքացիական ներգրավվածության միջոցառումներ կազմակերպելու և ղեկավարելու հարցում իրենց ամենաշատը ոչ գիտակ են համարում տնային տնտեուհիներն (48%) ու մասնավոր ընկերությունում աշխատողները (44%), և ամենաքիչը՝ պետական կառույցներ աշխատողներն (23%) ու գործազուրկները (29%):

Աղյուսակ 24. Հմտությունների բարելավման կարիքները՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Բոլորովին ոչ գիտակների %	Նշանակալիության թեստ
Արդյունավետ կերպով հայտնել կարծիք	**78**	**21%**	**n/a**
Աշխատում եմ մասնավոր ընկերությունում	11	26%	Kruskal-Wallis's test, p = 0.008
Աշխատում եմ պետական կառույցում	3	7%	
Ուսանող/աշակերտ եմ	12	14%	
Գործազուրկ եմ	6	22%	
Տնային տնտեսուհի	34	29%	
Ինքնազբաղված	12	25%	
Չեռնարկատեր	-	-	
Համագործակցել այլ մարդկանց հետ	**121**	**33%**	Kruskal-Wallis's test, p = 0.057
Աշխատում եմ մասնավոր ընկերությունում	18	44%	
Աշխատում եմ պետական կառույցում	8	19%	
Ուսանող/աշակերտ եմ	19	21%	
Գործազուրկ եմ	9	32%	
Տնային տնտեսուհի	49	42%	
Ինքնազբաղված	18	38%	
Չեռնարկատեր	-	-	
Կազմակերպել և ղեկավարել միջոցառումներ	**139**	**38%**	**n/a**
Աշխատում եմ մասնավոր ընկերությունում	17	44%	Kruskal-Wallis's test, p = 0.004
Աշխատում եմ պետական կառույցում	10	23%	
Ուսանող/աշակերտ եմ	29	33%	
Գործազուրկ եմ	8	29%	
Տնային տնտեսուհի	55	48%	
Ինքնազբաղված	20	43%	
Չեռնարկատեր	-	-	

Մի շարք տարբերություններ են արձանագրվել նաև կարողությունների առումով, որոնք երիտասարդները կցանկանային բարելավել՝ համայնքային կյանքում ավելի ակտիվ ներգրավվելու համար: Հաղորդակցության և առաջնորդության բարելավումն ավելի շատ են կարևորում քաղաքաբնակները (33% և 30% համապատասխանաբար), քան գյուղաբնակները (23% և 14% համապատասխանաբար): Իսկ թվային գործիքների

և թվային գրագիտության հմտությունների բարելավումը ավելի շատ կարևորում են 18-22 տարեկանները (23%), քան 23-26 (13%) և 27-30 տարեկանները (10%)։

Աղյուսակ 25. Հմտությունների բարելավման կարիքները՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	Կարողությունը նշածների %	Նշանակալիության թեստ
Հաղորդակցություն	**101**	**28%**	**n/a**
Բնակավայր			
Քաղաքային	54	33%	Chi-square test, Chi-square=4.422, p=0.035
Գյուղական	47	23%	
Առաջնորդություն	**88**	**24%**	
Բնակավայր			
Քաղաքային	49	30%	Chi-square test, Chi-square=5.743, p=0.017
Գյուղական	39	14%	
Թվային գործիքներ և թվային գրագիտություն	**65**	**18%**	
Տարիք			
18-22	40	23%	Chi-square test, Chi-square=10.625, p=0.031
23-26	76	13%	
27-30	10	10%	

Երիտասարդներին քաղաքացիական մասնակցությանն առնչվող գիտելիքներն ու հմտությունները բարելավելու միջոցների հարցում արձանագրվել են տարբերություններ ըստ սեռի և բնակավայրի։ Քաղաքաբնակ երիտասարդներն ավելի շատ են կարևորում դասընթացների մասնակցությունը (70%), քան գյուղաբնակները (59%)։ Սակայն, քաղաքաբնակների ավելի քիչ տոկոս է նշել հաճախակի շփումները քաղաքացիական մասնակցությամբ հետաքրքրված այլ երիտասարդների հետ։ Իգական սեռի երիտասարդների ավելի մեծ տոկոս է (68%) կարևորում դասընթացների մասնակցությունը, քան արական սեռի երիտասարդներինը (50%)։ Գրքերի և առցանց ռեսուրսների հասանելիությունը և մենթորությունը ՔՀԿ-ների ներկայացուցիչների կողմից ևս ավելի հաճախ են նշվել իգական սեռի հարցվողների կողմից (25% և 22% համապատասխանաբար)՝ համեմատած արականի հետ (7% և 7% համապատասխանաբար)։

Աղյուսակ 26. Հմտությունների բարելավման միջոցները՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների

Համեմատության գործոն	N	%	Նշանակալիության թեստ
Դասընթացների մասնակցություն	**234**	**63%**	**n/a**
Բնակավայր			
Քաղաքային	114	70%	

Գյուղական	120	59%	Chi-square test, Chi-square=4.422, p=0.035
Սեռ			
Արական	46	50%	Chi-square test, Chi-square=9.410, p=0.002
Իգական	188	68%	
Գրքերի և առցանց ռեսուրսների հասանելիություն	**76**	**21%**	**n/a**
Սեռ			
Արական	7	7%	Chi-square test, Chi-square=12.580, p=0.000
Իգական	69	25%	
Մենթորություն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից	**66**	**18%**	**n/a**
Սեռ			
Արական	7	7%	Chi-square test, Chi-square=8.761, p=0.003
Իգական	59	22%	
Հաճախակի շփումներ քաղաքացիական մասնակցությամբ հետաքրքրված այլ երիտասարդների հետ	**149**	**40%**	**n/a**
Բնակավայր			
Քաղաքային	56	34%	Chi-square test, Chi-square=5.304, p=0.021
Գյուղական	93	46%	

Որակական հարցարզույցների արդյունքում բացահայտվեց, որ առանցքային տեղեկատուները երիտասարդների կարողությունները քաղաքացիական մասնակցության առումով գնահատում են ոչ այդքան բարձր: Կարողությունների բարձրացման առումով կարևորվում է ՏԻՄ-երի և ՔՀԿ-ների աշխատանքներում և քաղաքացիական տարբեր գործընթացներում երիտասարդության ներգրավումը:

«Ընդհանուր առմամբ, 10 բալային համակարգից, հավանաբար 5 միավորով են կարողունակ: Նույնիսկ շատ ակտիվները տեղեկացված չեն, թե ընդհանրապես ինչպես է կառավարվում մեր երկիրը, ադքան էլ լավ տեղյակ չենք, նույնիսկ ակտիվները»:

ՔՀԿ ներկայացուցիչ

«Ըստ իմ դիտարկումով կասեի, որ կարողունակ չեն, նույնիսկ ակտիվ երիտասարդները, որ ամեն տեղ մասնակցում են: Օրինակ, ծրագրային հետազոտություն, բյուջետային վերլուծություն, պրակտիկ կիրառություն, որպեսզի կառուցի զարգացման կարիքը, շատ կարևոր է, որ երիտասարդները օրենսդրությունը լավ յուրացնեն: Նաև շատ կարևոր հատկություն է բանակցելը, լսել կարողանալը»:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

«Կարծում եմ, որ մեր երիտասարդներին պետք է զարգացնել այդ ուղղությամբ, ոչ միայն ասել՝ արի տես համայնքապետարանի այս բլոկը, այս բլոկը, տես քեզ՝ որտեղ է հետաքրքիր, գնա, նստիր ու մի

շաբաթով այդ աշխատակցի հետ աշխատիր, փորձիր, տես՝ ինչ է։ Շատ լավ կլինի, որ ինքը այդ աթոռին զգա ու հետո համայնքապետարանից դուրս գա, հասկանա, թե ինչ է նշանակում ամեն ինչը ներսից անելը»։

ՔՀԿ ներկայացուցիչ

«Կանչում ենք, մարդկանց ասում ենք, տեսեք, որ մենք աշխատում ենք այսպես, մեր զարգացման գծով մասնագետը ես եմ, անում է այսինչ բանը, մեր արտաքին կապերի մասնագետը՝ այսինչ բանը, մեր հաշվապահը սրանով է զբաղվում, իմացեք, որ սա այսպես է լինում։ Երբ մարդուն ներսի կառուցվածքը բացատրում ես, ինքը հասկանում է։ Այդ ամենը հիմա արվում է և՛ ՀԿ-ների, և՛ ՏԻՄ-ի կողմից։ Եթե թույլ տանք, որ իրենք անենք, ավելի լավ կհասկանան քաղաքականությանը մասնակցելու գործընթացը»։

ՔՀԿ ներկայացուցիչ

«Հմտությունների զարգացման հետ կապված, յուրաքանչյուր երիտասարդի տալ ֆունկցիոնալ հանձնարարություն, սպասել դրա կատարմանը։ Մենք միշտ ասում ենք խմբով, բայց փորձը ցույց է տալիս, որ խմբային պատասխանատվությունը գոյություն չունի։ Շատ հաճախ շատ լավ երիտասարդներ պրոցեսից դուրս են մնում, որովհետև չեն հասկանում իրենց դերը, չեն պատկերացնում՝ ինչ պետք է անեն»։

ՔՀԿ ներկայացուցիչ

«Մենք փորձում ենք ծրագրեր առաջարկել, որ երիտասարդները մասնակցեն, կամ մեզ մոտ բերեն, անեն ծրագրերը, կամ իրենք են առաջարկում, միջազգային ծրագրեր ունենք, որ մեզ մոտից առաջարկել ենք, երիտասարդները գնացել, մասնակցել են։ Վերապատրաստումներ ունենք, որ երիտասարդական աշխատողները գնում մասնակցում են»։

ՏԻՄ ներկայացուցիչ

ՖԽՔ-ներին մասնակցած երիտասարդները նշում են մի շարք հատկանիշներ, որոնցով, ըստ իրենց, օժտված են կամ պետք է օժտված լինեն իրենց համայնքում ակտիվ քաղաքացիական մասնակցություն ցուցաբերող երիտասարդները։ Մասնավորապես, նշվել են այնպիսի կարողություններ և հատկանիշներ, ինչպիսիք են վերլուծական մտածելակերպը, քաղաքական գիտելիքները, որոշումների կայացումը, ինքնուրույնությունը, առաջնորդությունը, ճարպկությունը, լայն և բազմակողմանի աշխարհայացքը, սրտացավությունը, հայրենասիրությունը, պատրաստակամությունը, խիզախությունը, նախաձեռնողականությունը, ակտիվությունը, նվիրվածությունը, կարծրատիպերից դուրս մտածելը, ստեղծարարությունը։ Որպես քաղաքացիական գիտելիքների և հմտությունների բարելավման միջոցներ՝ երիտասարդներն առաջարկում են դասընթացներին, քննարկումներին ու բանավեճերին մասնակցությունը։

«Միակողմանի մտածելակերպ չունենան, ժողովրդի մտքեր ունենան, վերլուծեն, ունենան տարածաշրջանի մասին պատկերացումներ, դրական բացասական կողմերը, այսինքն՝ պետք է ունենան քաղաքական հասկացողություն, տիրապետեն այդ ոլորտին, որ կարողանան ճիշտ որոշում կայացնել։ Առանց հիմք որոշումներ կայացնելը վատ հետևանքներ ունի»։
ՖԽՔ մասնակից

«Ցանկացած բանի մասնակցելուց գոնե մի քիչ բազա պետք է ունենալ, օրինակ, քաղաքականությունից պետք է մեծ բազա ունենաս, որ կարողանաս մասնակցել ու ներդրում ունենաս»։
ՖԽՔ մասնակից

ՖԽՔ-ներին մասնակցած երիտասարդները կարևորում են ոչ ֆորմալ կրթության դերը երիտասարդների մասնակցության գործում և այդ առումով վերջին տարիներին Գավառում առկա դրական միտումները։ Միևնույն ժամանակ, շեշտադրվում է դրա տարածման գործում կրթության հանդեպ երիտասարդների դիրքորոշումների փոփոխման անհրաժեշտությունը։

«Միայն Գավառում չէ, որ ոչ ֆորմալ կրթությունը չկա, առհասարակ Հայաստանում չկա։ Դա իրենից ուրիշ բան է ներկայացնում, որ ես գնամ սովորեմ, դիպլոմ չտան, բայց կարողանամ գործի ընդունվել։ Բայց այդ ճյուղը Հայաստանում զարգացած չէ, մենք դեռ պայքարում ենք կարմիր դիպլոմի համար, գովասանագրի համար»։

ՖԽՔ մասնակից

Ինչ վերաբերում է համայնքում ամենակարևոր խնդրին, ՖԽՔ-ները ցույց տվեցին, որ երիտասարդների համար ամենակարևոր խնդիրներն են ճանապարհների ասֆալտապատումը, թափառող շները, աղբահանությունը, Գավառագետի և Սևանա լճի աղտոտումը, տրանսպորտը, կրթության, մշակույթի, ժամանցի և զարգացման վայրերի ու հնարավորությունների պակասը, աշխատատեղերի պակասը, դեղատների և բանկոմատների բացակայությունը, արտագաղթը։ Երիտասարդների մեծ մասը հիմնականում ներգրավված չէ այդ խնդիրների լուծման գործում։ Այնուամենայնիվ, ՖԽՔ-ների որոշ մասնակիցներ ունեցել են ներգրավվածություն մի շարք խնդիրների լուծման գործում։

«Երկու տարի առաջ, երբ տեսանք, որ աղբամանները շատ քիչ են, մի խումբ ձևավորենցինք ու որոշեցինք, որ պետք է սիրուն գրվածքով ամաններ պատրաստենք, ու տարբեր փողոցներում դրել էինք։ Մի քանի օր հետո տեսանք, որ դրանք էլ չկան, կորել էին, ու երևի մեր ամբողջ աշխատանք ապուրդյուն էր դարձրել»։

ՖԽՔ մասնակից

«Մենք մի անգամ դիմել ենք տրանսպորտի տրամադրման համար, բայց մերժել են, պատճառաբանելով, որ ուսանողները քիչ են, բնակչությունն էլ չի գալիս, սակայն եթե լինի բնակչությունը, մեծ սիրով կգան, ուսանողներն էլ, նման խնդիր չի լինի»։

ՖԽՔ մասնակից

«Դպրոցով շաբաթօրյակների են եղել, բայց օգուտ չեն տվել։ Կամավոր մասնակցել ենք աղբահանման գործընթացին, բայց հիմնականում չի օգնել, հաջորդ օրը նույն վիճակն է»։

ՖԽՔ մասնակից

«Ճանապարհների պահով քննարկման եմ մասնակցել: Որոշում էին, որ մեր գյուղում կանաչ աղբամաններից դնել, որ շատ աղբ չթափվի, բայց դա էլ արդյունք չտվեց»:

ՖԽՔ մասնակից

«Տարբեր հասարակական, երիտասարդական կազմակերպություններում անդամագրվելով քո ձայնը ավելի լսելի ես դարձնում, դրա համար խնդիրների մասին հնարավորություն ենք ունենում ինչ-որ ձևով հայտնել համայնքապետարանին: Տարբեր ծրագրեր կան, որոնց միջոցով գումար ենք ստանում ու փորձում ենք ինքնուրույն լուծել»:

ՖԽՔ մասնակից

«Իմ ներգրավումը կարևոր եմ համարում այնքանով, որ ինձ համար կարևոր է այդ խնդիրը: Բայց եթե լուծում չի ստանում, հիասթափություն է առաջանում կամ էլ ցանկություն չի առաջանում կրկին բարձրաձայնելու»:

ՖԽՔ մասնակից

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Փաստաթղթերի վերլուծության շրջանակում իրականացվել է Գավառ համայնքի երիտասարդական քաղաքականությանը վերաբերող մի շարք փաստաթղթերի ուսումնասիրություն:

«Գավառ համայնքի երիտասարդական ոլորտի զարգացման գործողությունների պլան»-ն անդրադառնում է երիտասարդների քաղաքացիական մասնակցությանը վերաբերող մի շարք խնդիրների: Մասնավորապես, ընդգծվում են որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացներում երիտասարդների մասնակցության սահմանափակ մեխանիզմների և երիտասարդների սոցիալական մասնակցության և ներգրավվածության ապահովման խնդիրները: Երիտասարդների քաղաքացիական մասնակցության առումով փաստաթղթում կարևորվում են մասնակցային ժողովրդավարության մասին գիտելիքների պակասը, մասնակցության մեխանիզմների և ընթացակարգերի մասին ոչ լիարժեք իրազեկվածությունը և քաղաքացիական գիտակցության ցածր մակարդակը: Հանրային գործընթացներում մասնակցության առումով կարևորվում է նաև կամավորության դերը: Չնայած 2020 թ. պատերազմից հետո երիտասարդների շրջանում տարածում է գտել կամավորությունը, հիմնականում ներառելով կազմակերպչական և հումանիտար աշխատանքներ թիկունքում, ընդհանուր առմամբ, կամավորության առումով համայնքի երիտասարդները դեռևս պասիվ են:

Ուսումնասիրվել է նաև «Գավառ համայնքի հնգամյա զարգացման ծրագիր»-ը։ Փաստաթղթում ներկայացված են մի շարք ծրագրեր, որոնց շահառուներ են հանդիսանում նաև երիտասարդները։ Փաստաթղթում անդրադարձ կա երիտասարդների քաղաքացիական մասնակցության բարելավման խնդրին և Գավառում երիտասարդական կենտրոն կառուցելու անհրաժեշտության մասին։ «Գավառի երիտասարդների տուն»-ը բացվել է 2022 թ.՝ «Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»-ի, UNICEF-ի հայաստանյան գրասենյակի և Գավառի համայնքի եռակողմ համագործակցության արդյունքում։ Կենտրոնի պահպանության ամբողջ ծախսը, որը տարեկան կազմում է մոտ 10 մլն. ՀՀ դրամ հատկացվում է համայնքի բյուջեից։ Կենտրոնի նպատակն է՝ բարձրացնել Գավառում և հարակից բնակավայրերում երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը երիտասարդական աշխատանքի իրականացման միջոցով։ Ըստ հնգամյա զարգացման ծրագրի՝ նախատեսվում է հիմնանորոգել Գավառ քաղաքի Մշակույթի տան և Գեղարվեստի դպրոցի շենքերը, որտեղ տեղակայված են մի շարք երիտասարդական կազմակերպություններ։ Նշվում է նաև խաղահրապարակների, մարզահրապարակների և պուրակների վերանորոգման մասին, ինչը կլուծի երիտասարդների սպորտող զբաղվելու և ժամանցի խնդիրները։

Փաստաթղթերի վերլուծության շրջանակներում ուսումնասիրվել են նաև Գավառ համայնքի՝ 2020-2024թթ. տարեկան աշխատանքային պլանները։ 2020 և 2021թթ. տարեկան աշխատանքային պլաններում ոլորտային նպատակներից է տեղական ինքնակառավարման բնակիչների մասնակցության խթանումը։ Այս նպատակով իրականացվել է 6 հանրային լսում։ Ծրագրում երիտասարդությունը ներառված է «Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ» ոլորտային նպատակում, որը ներառում է համայնքներում մշակութային կյանքի բարելավմանն ուղղված ծրագրեր։ Ըստ փաստաթղթի՝ ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ իրազեկված է համայնքի բնակիչների 65%-ը։

Գավառ համայնքի 2024 թ. տարեկան աշխատանքային պլանում ներառված է մասնակցային բյուջետավորման ծրագիր, որի նպատակն է նպաստել համայնքի բնակիչների, այդ թվում՝ երիտասարդների, ակտիվ մասնակցությանը համայնքի բյուջեի վերաբերյալ որոշումների կայացման, բյուջետային միջոցների բաշխման գործընթացներում՝ դարձնելով տեղական ինքնակառավարումն ավելի թափանցիկ։ Ծրագրի հիմնանպատակները սահմանված են համայնքի հնգամյա զարգացման ծրագրում։ Այն քննարկելու նպատակով կազմակերպվել են հանրային լսումներ, իսկ բյուջեն կազմում է 10 մլն. ՀՀ դրամ։

Ընդհանուր առմամբ, 2020-2024 թթ. ընթացքում Գավառի համայնքապետարանը երիտասարդների հարցերով զբաղվող ՔՀԿ-ներին տրամադրել է շուրջ 41 մլն ՀՀ դրամ։

Հարկ է նշել, որ 2020 թ. այդ գումարը կազմել է 700.000 ՀՀ դրամ, իսկ 2024-ին՝ շուրջ 17 մլն ՀՀ դրամ։ 2019-2024 թթ. ընթացքում ուսանողների ուսման վարձերի ֆինանսավորման համար համայնքապետարանը տրամադրել է շուրջ 35 մլն ՀՀ դրամ, երիտասարդներին ուղղված մշակութային միջոցառումների համար՝ շուրջ 35 մլն ՀՀ դրամ, և երիտասարդներին ուղղված նվիրատվությունների համար՝ շուրջ 38 մլն ՀՀ դրամ։